

ԽԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻ 6-7

5 ՅՈՒՆՎԱՐ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեբաղնական վեճեր

Աշխարհիս Խորհուրդներ

Խմաստաւիրական Դէմքեր

Թաւակնակն (Քերթում)

Ծնունդներ եւ կեանքներ

Պէքա

Զմեռ Գիշեր

Ազունը Լուրը (Ծնունդի Պատմութիւն)

ՎԵՐՈՇՆԻ Ժ. ՏՐ ՊՈՅՈՒՒ

Ֆրանսական Գրականութեան Նոր Դէմքեր

Նիւէլին Զոնը

ԼԷՆԻՆՍ ԱՆՏՐԻԷՅԻ

Արեւելագէտներ եւ Թուրք լեզուն

Քրոնիկ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲՐՈՑ. ՅԱԿՈԲՈՍ ՃԷՃԻՋԵԱՆ

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՍԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ԶԷՕԿԻՒՐԵԱՆ

Ե. Ա.

ԱԶՄԷՏ ՇԻՔՄԷԹ

50 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ

Տ ՊԻՍ ԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

1907



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 6-7

5 ՅՈՒՆՎԱՐ 1907

ԲԱՐԵՇՐՋՈՒԹԵԱՆ ՎԵՃԸ

Կարծիքներն ու ժամացոյցները իրա-
րու կը նմանին. երբեք մէկեղ չեն
փախեր. բայց ամէն մարդ իր կարծիքին
ու իր ժամացոյցին կը հաւնի: ՊՈՊ

Երբ մրցումի նիւթ մը և կամ կրօնական վիճաբանութիւն մը երեւան
կուգայ լրագրութեան մէջ, կը տեսնուին կարգ մը գէմքեր, որոնք աշ-
նան սուսկերու նման յանկարծ դուրս կ'ելլեն, և կը սկսին բաներ մը
խօսիլ ու գրել: Այնպիսիները ուրիշ ատեն գոյութեան ո' եւ է նշան
չունէին կարծես: Իբրեւ է թէ ոչ ոք իրաւունք ունի անոնց հարցնելու
թէ ո՞վ են իրենք, և ո՞ւր էին մինչեւ հիմայ: Այդ կարգի անհասաներ
կրնան իրենք իրենց հաշիւին տալիլ, հոգ չէ թէ՝ ո՞ւր: Բաւական է որ
հանրային կարծիքը չվրդուի:

Վերջերս կարգ մը պարագաներ պատճառ տուին որ այդպիսիները
իրենց երազկոտ գլուխնին անգամ մըն ալ վերցնեն ծերութեան բարձին
վերելէն, և անգամ մըն ալ նետուին այն հոսանքին մէջ, զոր արդի
մտածումները երկնած են, ատանց կանխաւ կարծիքը հարցնելու եկե-
ղեցականին ու աշխարհականին: Լրագրական աշխարհի մէջ իրողութիւն-
ներ կան, որոնց պատճառական ինչուն փնտուել, և զայն արգելել,
աւելորդ գոգնութիւն մը պիտի ըլլար: Չպիտի կրնայինք ըսել ծառին կամ
ծաղիկին, որ իր գեղնած տերեւները չթափէ, և անոնց տեղ նորեր
չբուսցնէ: Անոնք բնութիւնը և անոր օրէնքը ցոյց պիտի տային մեզի,
և պիտի ըսէին ապահովաբար. «Եթէ գեղնած տերեւները թօթափելը
յանցանք մըն է, մենք չենք այդ յանցանքին պատասխանատուն. բնու-

թիւնը դատաւարոնցէք» : Չսխալի կրնայինք հրամայել օձին, որ իր խորխը չփռէ, երբ բնութեան օրէնքը բռնի անոր կռնակէն կը քաշէ կը հանէ շապիկը և զայն փռի իր վերածէ. չսխալի կրնայինք պահանջել քարերէն, որ անեղծ և անվթար պահէին ի քղինքնին երկաթի շփումի մը կամ ջուրի վաղքի մը ներքեւ : Չէք կարծեր, թէ բնութեան օրէնքը միեւնոյն քմահաճոյքը կաթեցուցած ըլլայ նաեւ մարդու խորհելու, դիտելու, զգալու և հաւատալու կարողութիւններու ազդիւրին մէջ : Եւ երբ սերմը կը հասունանայ, երբ միտքին մէջ թաղուած ցորենահատը կ'աճի ու կը պողպարերի ժամանակաւոր փառամէ մը վերջ, ելլենք մարդկային կարողութիւնները նշովինք, անոր համար, որ իբրեւ հարազատ զաւակը բնութեան, կը հպատակին այդ սովորական օրէնքին, և իրերու բնական յաջորդականութիւնով մը հարկադրուած կը զգան ինքզինքնին իրենցմէ առաջ ապրողներու դատողութիւնէն տարբեր դատողութեան մը տէրը եղած ըլլալու : Կը կարծեմ, թէ այդ օրինակ պահանջկոտութիւն մը սխալի վնասէր նոյն իսկ կրօնական ոգիին, քանի որ մինք դիտենք, թէ Մովսէս տարբեր խորհեցաւ ու տրամաբանեց իր նախորդներէն, և Քրիստոս՝ իբրեւ Քրիստոնէութեան մարգարէն՝ Մովսէսէն տարբեր խորհեցաւ, զգաց, բացատրեց : Մարդկային ու տիեզերական բոլոր խնդիրներու մէջ բնութեան կատարած դերը այնքան նշանակական է և անտարակուսելի, որ անոր դուրս թիւնը ուրանալը բուն իսկ Աստուծոյ գոյութիւնը ուրանալ պիտի նշանակէր : Արտայայտուած գաղափարներուն մէջ, իմ մասին յանցաւոր մը գոյութիւն չունի բնաւ, բացի անոնցմէ, որոնց քիսոսնեակաւ գոյնով շարունակ կեդծարիւթօսութիւնը, տկն յանդիման իրողութիւն մըն է, և որոնց հեղինակները այդ դիմակը կը գործածեն՝ Կրօնքը, Եկեղեցին, և ասոնց հետ հանապազօր գործ ունեցող միամիտ ժողովուրդին ռամիկ հաւատքը շահագործելու համար : Ասիկա իմ բովանդակ խիղճովս ու դիտակցութեամբս է, զոր կը յայտարարեմ աշխարհի առջեւ :

Յանցաւորներ չենք փնտռեր մենք : Կ'ուզենք վերլուծել և կարծիքներու տեղի տուող պատճառները երեւան բերել, և այդ պատճառներուն հանդէպ ցոյց տալ բնութեան անողոք օրէնքը, որուն դէմ քմահաճոյքները չեն կրնար ո՛ր եւ է խոչընդոտ յարուցանել : Որպէս զի եկեղեցական հարցերու մէջ ի դուր չմաքառինք հովերու դէմ, և կարող ըլլանք իրար հասկնալ, պէտք է ուշադիր ըլլանք լաւ դիտելու առարկան, նիւթը, սկզբունքը, որ կորելը պիտի կազմէ վիճարանութիւններու կամ տրուած վճիռներու :

Որպէսզի կարող ըլլանք յետոյ մեր միտքը կարելի եղածին չափ պարզօրէն բացատրել, հոս կ'ուզեմ պզտիկ օրինակ մը դնել : Օր մը վանքի մը շէնքը ներկայելու համար մէջտեղ երկու լուսանկարներ բերին, երկու տարբեր կողմէ առնուած : Մեզմէ մէկը, որ վանքը արեւելակողմէն

դիտած էր, չուզեց հաւատալ, թէ միւս պատկերը՝ որ արեւմտակողմէն քաշուած էր, բուն իսկ այն վանքին պատկերը եղած ըլլար: Երկար խօսքերէ վերջ հաղիւ կրցանք համոզել մեր ընդդիմախօսը, թէ այդ միւս պատկերն ալ ճիշդ նոյն վանքին չէնքը կը ներկայացնէր, սա տարբերութեամբ միայն որ անոր ներկայացուցած արեւմտակողմը վանքին ճիշդ այն մասն էր, զոր ինքը տեսած չէր: Այդ միեւնոյն յամառութիւնները կատարեալ անհրեւտութեամբ կը շարունակուին այսօր ալ: Ոմանք իրենց ակնոցին տակէն, եկեղեցիին այս կամ այն կողմը տեսնել վարժուած են, և չեն ուզեր ընաւ դանի իր ամբողջութեամբը, իր բոլոր կողմերովը տեսնել և ըմբռնել: Անոր համար, երբ բարեշրջութեան ընդունակ միտում մը ցոյց կուտանք մեր եկեղեցիին մասնաւորապէս և ընդհանուր քրիստոնէական եկեղեցիին վրայ ընդհանրապէս, անոնք կը զայրանան, կը յամաւին և լուռանք կը տեղան մեր գլխուն: Մենք ընաւ ինքնիրեննուս չտեսանք կրօնքին բարեշրջութեան կամ բարեփոխութեան — ի՞նչ կ'ուզէք ըսէք — ընդունակ այդ անկիւնակողմը: Բնութեան մէջ ո՛չ անշատութիւն կայ և ո՛չ ոստում: Պէտք է ընդունինք ասիկա: Մենք իրեւ զաւակը եկեղեցիի մը, որ մեզ ծնցուց, և իբրեւ զաւակը բնութեան օրէնքին, պարզ կրկնում մը ըրինք բնութեան հանդիսաւոր քարոզին, զոր դարերը յաջորդաբար և անընդմիջապէս կը քարոզեն: Մենք գիտենք, թէ Սաղմոսերգուն « օր աւուր բղիւն զբան, և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն » խօսքը, ոչ բանաստեղծական քմայք մըն է, և ոչ թուցիկ մոլորանք մը կրօնական բանաստեղծութիւններու այդ կուռ ու սեղմ ներշնչումներուն մէջ: Ան փիլիսոփայական դրուագ մըն է, որուն վրայ հիմնուեցաւ յետոյ՝ Լալանիցի « ներկան յղի է ապագայով » իմաստասիրական վարդապետութիւնը, որ ամէնէն ուղիղ թարգմանութիւնն է իրերու չղթայաչար յաջորդականութեանը, բնութեան ծոցին մէջ, և արդիւնքի ու պատճառի սերտ հաղորդակցութիւնը հեռանկայտ անցեալներու աղջնամուղջին մէջէն իսկ: Լալանից այդ լակոնական բացատրութիւնով չգոհացաւ, և իր այդ կորովի գաւանսնքը քիչ մը աւելի ընդլայնելով, սա ձեւով բացատրեց. « Բնութեան մէջ բան մը տեղի չունենար ոստումով, ամէն ինչ իրարու կապուած է, հոն ամէն ինչ պատճառ և արդիւնք է միանգամայն: Ներկան իր գոյութեան բաւարար իրաւունքը կամ պատճառը ունի անցեալին մէջ, հաւա ներկան իր մէջ կը ծրարէ ապագային ալ պատճառը»: Փնտեցէք, որչափ կրնաք, բնութեան բոլոր խորչերուն մէջ, գործեր, իրողութիւններ, արտադրութիւններ, և ամէն ինչ որ կը ծնին ու կը մնան ինչ մեր մոլորակին վրայ, և պիտի տեսնէք միեւնոյն օրէնքը, որոշ և բացարձակ, տիրող և անհերքելի, ճշգրտուած և ապացուցուած: Չպիտի կրնալինք պնդել, թէ կրօնական խնդիրները, որոնք նախապաշարումի սահմանաւ չիծէն դուրս ելած, մտած են առողջ իմաստասիրութեան գաւիթին

մէջ, բացառութիւն մը կը կազմէին տիեզերական օրէնքին առջեւ: Հաւատքը հաշիւ չպահանջէր. գլխաւորը մըն է ան. և ուր որ հաշիւը կը մտնէ՝ հոն գլխաւորը կը միտնի: Բայց պէտք է ընդունիլ, թէ կրօնքին մէջ ամէն ինչ հաւատք չէ: Շատ անգամ մենք ոսկորները կը կտորենք ծուծին համեմուտ համար. պտուղներուն կեղեւը կը պատուէնք՝ միջուկին սիրտն, որովհետեւ գիտենք, թէ հոն է անուշը, մեր գոյութեան սատարող հիւթը: Դժբախտաբար շատ անգամ կը սրտնեղինք անիրաւ կերպով, երբ մէկը՝ կը փորձէ մեր հոգեկան անուշիկն՝ կեղեւները կտորել, բռն ուղը և ծուծը հրամցնելու համար այն ժողովուրդին, որ վարժուած էր հաւատքը իր կեղեւովը կրծել, չկեղեւուած ինձորի մը կամ վարունգի մը պէս: Կար ժամանակ մը, երբ եկեղեցւոյ կանոններ այրող լաւայի պէս անէծք ժայթքեցային ամէն անոնց դէմ, որոնք երկրին կը որութիւնը և հակոտնեաներու գոյութիւնը կ'ուզէին վստահել: Դ. դարուն մուրաւիտ կղերին ներկայացուցիչը, Ֆիրմէն Լակտանս, զոր սմանք իրաւամբ « Բրիտանեայ Կիկերոն » յորջորջեցին, իր գլուխը անգամ վրայ տալու պատրաստ էր, բաւական էր որ մէկը չընդգիծարսօսէր քաղաքի աշխարհի մը իր քրիստոնէական վարկածին: Եկեղեցին, որ ճշմարտութեան հակասեր բնուէ, չվարանկցաւ՝ յետոյ՝ իր անխոհեմ ջատագովներուն դաւանանքը սրբել իր ստմարէն, և ընդունիլ ո՛չ միայն աշխարհի կը որութիւնը, այլեւ գոյութիւնը հակոտնեաներուն, որոնք այնքան գայթակղեցուցին միաբերը, և որոնք քիչ միայն ծանրակշիռ ու դժբախտ արդիւնքներ ծնցնէին բռն իսկ քրիստոնէական դաւանանքի յենարանին կրթնած: Նոյն իսկ եկեղեցիին մէջ գիտուած այս սրբագրութիւնները, անհերքելի ապացոյցները չէն, թէ եկեղեցին ալ ընդունած է բռն իսկ « բարեշրջութեան » սկզբունքը: Զգարմանանք բնուէ. բնութիւնն ու դարերը իրենց գործը պիտի կատարեն, թէ իսկ մենք բարեշրջութեան սկզբունքը մերժենք. այս մասին մեր այս՝ կամ ոչը յովտ մը անգամ չպիտի կրնան փոխել Աստուծոյ կողմէ բնութեան պարզեւուած օրէնքէն, և անիկա պիտի դառնայ՝ թէ իսկ մենք ոչ ըսենք: Ասիէ ինը տարիներ առաջ « Զարգացումի Պէտքը » (Ծաղիկ Շաբաթերթ, թիւ 17) մեր յօդուածին մէջ կը գրէինք, թէ « Ս. Գիրք » երկու սրոյ մասեր ունի իր մէջ, մէկը՝ աստուածայինը կամ յատնեալ ճշմարտութիւնը, որ անխափսիս է, և միւսը՝ մարդկային տարբը, որ իբր բաւաճել կը ծառայէ Յայանութիւնը բացատրելու, և որ շարունակական զարգացումի կը կարօտի: Կը նմանի բնութեան, որ չփոխուիր թէեւ, բայց բնութեան գիտութիւն կը զարգանայ»: Մինչեւ հիմա մոռցուած մեր յօդուածը նախաբանն մըն էր պարզապէս, կրօնական այն ըմբռնումներուն, զոր մենք անկէ ետքը արտայայտեցինք, և որուն հիմա անգամ մըն ալ կ'անդրադառնանք, պարզապէս ցոյց տալու համար բարեշրջութեան սկզբունքը, որ առանց մեր ուղեւուն կը գործէ: Մարդոցմէ

ամէնքն ալ, անոր հետ պիտի հաշտուին, երբ բարեօրոշուելու պէտքը
զգան, որովհետեւ տիեզերական ընդհանուր բարեշրջութիւնը անցեղիորէն
կը գործէ, առանց կանխաւ մեր կարծիքը հարցնելու :

Իմ մասին, բանի մը արժէքը իր իսկական բարձրութեան մէջ պա-
հելու համար, պէտք է զտել զանիկա, և մաքրել այն բոլոր բիծերէն,
որոնք նմանողութեան չիտթութեամբ մը անոր հետ խառնուած են :
Օտարամուտ տարրերը որքա՛ն ալ անվնաս նկատուին, ցեց մըն են վեր-
ջապէս, որոնք ուշ կամ կանուխ կը փնտնեն անոր արժէքին : Ասիկա
ամէնէն աւելի ճշմարիտ է կրօնքին համար : Օտարամուտ տարրերով
բեռնաւորուած հաւատք մը, որ կտարարի պէս կը ծանրանայ խիղճերու
վրայ, չկրնար հոգեպէս փրկարար դեր մը կատարել : Զանազաններ
մարդկային տարրը աստուածայինէն, թողունք որ այս վերջինը ըլլայ
մեր հոգիներուն խօսողը, մեղ ներշնչողը, մեղ առինքնողը, և մենք
մեր իսկ ձեռքովը մաքրենք, անոր շուրջը ծլարձակող մտադրածային
տարրերը, եթէ կ'ուզենք որ մեր կեանքը մշանջնի պաշտում մը, ան-
ցամաքելի սէր մը, և բոլորանուէր զո՛ւ մը ըլլայ հաւատքի զգացումին :
Այնպէս, կը փնտնենք կրօնքին, և վարկարել կ'ընենք զանիկա : Այլա-
պէս, կ'ուծացնենք ժողովուրդը իր Եկեղեցիէն ու Հաւատքէն, և նոյն
խակ կրօնք կ'անկրօնեմք : Յարգենք բարի աւանդութիւնները, իրրեւ
աւանդութիւններ, յարգենք սովորոյթները իրենց բարսաշարի յեղանա-
կաւորումներուն մէջ. բայց զանոնք չկրօնականացնենք, որովհետեւ
ատով վարկարել ըրած կ'ըլլանք ո՛չ միայն զանոնք, այլև կրօնքը,
այլև Հաւատքը, այլև Եկեղեցին : Օր մը տ'Ալամպէրի բարեկամներէն
մէկը հարցուց իրեն, թէ ինչո՞ւ Ֆրանսական Ակադեմիին ճարտասա-
նութեան իբր մրցանիւթ Հաւաքարիկը ներքողը Վէնան տը Բօլի, որ
վերջին դարուն ամէնէն յարգելի մարդերէն մէկը եղաւ, իր գործնա-
կան բարեգործութիւններովն ու մարդասիրութիւններովը : «Ա՛հ, բա-
րեկամս, ըստ տ'Ալամպէր, ի՛նչպէս կ'ուզես որ Ֆրանսական Ակա-
դեմիին այդպէս ընէր, քանի որ (Եկեղեցին) զայն վարկարել ըրաւ
սուրբերուն կարգը դասելով » :

Կը վախճամ թէ օր մը մեղի համար ալ նոյնը պիտի ըսեն, մեր կրօնա-
կան սին պահանջիտութիւնները թղթատելով : Գիտնա՛նք վերջապէս թէ
բարեշրջութիւնն ու բարեշրջութեան ընդունակ սկզբունքներն — ըլլան
կրօնական թէ իմաստասիրական — են որ կոչուած են ապրելու իրաւունքին,
և որոնց չունէին տակ ծլարձակող մտացութեան փոշիները իրենց տակ
պիտի թաղեն անարժէք վիճաբանութիւններու և վիճողներու լեզէնը :

ՄՈՒՇԵՂ ՆՊՈՍԿՈՊՈՍ

ԱՅԽԱՐՀԻՍ ԽՈՐՀՈՂՆԵՐԸ

Տըլարօշ, ֆրանսացի մեծ նկարիչը՝ որ ապրեցաւ ժ.՝ դարուն առաջին կիսուն մէջ, և որ նշանաւոր եղաւ մասնաւորապէս իր գծած պատմական նկարներուն համար, գծած է Ֆրանսայի Գեղարուեստից Պալատին մէջ համբաւաւոր սրտիկեր մը կիսաշրջանակի ձեւով, որուն մէջ հաւաքել ջանացած է աշխարհի անմահները, մեծ, հսկայ մկաքեր, որոնք ամէն դարու մէջ փողփողած են։ Սքանչելի կաճառ մըն է ան։ Տըլարօշ իր կեանքին մեծագոյն գործը սեպեց զայն և ո՛չ ժամանակ և ո՛չ ալ աշխատանք խնայեց անոր համար։ Իր համբաւը մեծաւ մասամբ այդ մեծ նկարին կը պարտի։ Արուեստագէտը կիսաշրջանին մէջտեղը առեալ մը բարձրացուցած է՝ որուն գտնին վրայ կը բազմի Միտքը, և այդ լուսաշող կեդրոնին շուրջը կը ժողվէ հանճարի փայլուն զաւակները, որոնք ամէնքն ալ մեծ խորհողներ եղած են։ Մէկ ակնարկ մը այդ խումբին վրայ՝ իսկոյն մեր աչքին առջեւ կը պարզէ բոլոր այն անհուն բարիքները զորս աշխարհի ու մարդկութեան ընձեռած են վերայնական մասածութեանց մէջ սաւառնող այն մեծ մկաքերը՝ որոնք յաճախ անպէտ բաներու նուիրուած կ'երեւան յաչս անոնց՝ որոնք սովոր են ինքզինքնին գործական մարդ յորջորջել։ Դիտելով Տըլարօշի այս շքեղ կաճառը, պիտի տեսնէք հոն կանգնած հին մեծ խորհող մը, Դեմոկրիտոս, որ ապրեցաւ (ն. Ք.) Չորրորդ դարուն մէջ, իմաստասէր մը և խորհող մը, որ անարծաթ չէր շատ մը ուրիշ մասածողներու պէս։ Մեծ հաւատութիւն ժառանգած էր և երկար ճամբորդութիւններ կատարեց Ասիոյ մէջ, ու այս կերպով ինքզինքը ծանօթացուց իր օրուան այլ և ալ փիլիսոփայական դպրոցներուն հետ։ Իր վերադարձին բարձր պաշտօններու հասաւ հայրենիքին մէջ, բայց ոչ մէկ բան, ո՛չ հարուստ ժառանգութիւն մը, ո՛չ ճանապարհորդական վայելքներ և ո՛չ ալ բարձր պաշտօններ երբեք չկարողացան կասեցնել զինքը իր խորունկ մասածումներէն։ Եւ ի՞նչ էին իր միտքը գրաւող առարկաները։ Անհունապէս փոքր, անտեսանելի հիւլէներուն վրայ էր որ կը խորհէր և ինքն էր որ առաջին անգամ հաստատեց թէ՛ ամէն ինչ զոր կը տեսնենք մեր շուրջը՝ կողմուած է այդ անտեսանելի հիւլէներէն. այս պատճառով է որ կը կոչուի և կը ճանչցուի իմաստասիրական աշխարհին մէջ իբր Հայր Հիւլէական Փիլիսոփայութեան։ Եթէ կ'երեւակայէք թէ անտեսանելիին ստանձաններուն մէջ թափառող այս մեծ մարդը թախծաղէմ և կամ խոժու մէկը պէտք էր ըլլալ, կարծեմ կը սխալիք, վասն զի իր օրուան մէջ զինքը կը յորջորջէին « խնդացող փիլիսոփայ », իբր հակապատկեր ուրիշ փիլիսոփայի մը, Հերակլիտոսի՝ զոր կը կոչէին « լացող փիլիսոփայ »։ Դեմոկրիտոս, հիւլէներու մեծ բարեկամը, կ'ուսուցանէր թէ՛ մէկ իմաստասէր մը բնաւ պէտք

չէ խռովի մարդկային յիմարութեան պատճառաւ, այլ պէտք է նկատէ զանոնք ամենակատարեալ անդորրութեամբ և հանդարտութեամբ: Յառաջ ասանելով մեր զննողութիւնը Տըլարօշի մեծ պատկերին վրայ, աչքերնուս պիտի զարնէ ուրիշ մեծ դէմք մը, զարձեալ մեծ խորհող մը անտեսա- նելի իրերու վրայ: Եռքլիան է ան, մեծ չափազէտը, որուն երկրաչա- փական գործերու մէկ թարգմանութիւնը սկսած էր ԺԱ. դարու մեր մատենագիրներէն Գրիգոր Մագիստրոս, որ իր ուրիշ Յունական գործե- րուն թարգմանութեան վրայ խօսելով, կ'ըսէ նաեւ. « Բայց և զերկրա- չափականն զԵկկլիտեսին սկսայ թարգմանել »: Դժբաղդաբար այդ թարգ- մանութեանն շատ քիչ բան հասած է մեզի: Օտար մը չէ ան մեզի, մանաւանդ անոնց՝ որոնք ձաքառած են ըմբռնելու իր ամենագիտարին երկրաչափական նախադասութիւններէն մէկ քանին: Այս մեծ միտքն ալ զբաղած է խորհելով անտեսանելի գիծերու և անկիւններու վրայ, վասն զի ճշմարիտ երկրաչափական գիծերը, կէտերը և հետեւապէս անկիւնները երբեք չեն գիշանիր երեւալու մեր մտայնու աչքերուն. անոնք միաքով ըմբռնուած և խորհուած են միայն, գործը զիւրացնելու համար է որ կը գծենք ու աստանելի կ'ընենք մեր երկրաչափական կէտերը, գիծերը և անկիւնները: Բայց ահա՛ ուրիշ հոյակապ դէմք մը: Նեւտոնն է ան, մեծ՝ չափազիտութեան մէջ, մեծ՝ բնութեան օրէնքներու գիտու- թեան մէջ, մեծ՝ իր հրաշալի գիւտերով, մեծ՝ գրեթէ ամէն բանի մէջ: Եւ ի՞նչ էր ան որուն վրայ սեւեռած խորհեցաւ ու խորհեցաւ այս գրեթէ անշուգական միտքը. զարձեալ՝ անտեսանելին: Ինքն էր որ խորհիլ սկսելով պարտէզին մէջ ծառին ներքեւ այն խնձորին որ վար իյնալով առաջին անգամ արթնցուց իր մտածումները, վերջապէս գտաւ այն գաղտնածածուկ, անտեսանելի զօրութիւնը որ կը կոչուի ծանրութեան զօրութիւն և որ կը բռնէ և իրարու հետ կը կապէ բոլոր անոնն աիւ- ղերքը: Նեւտոն էր նաեւ որ Լայպնիցի ու Լակըանժի հետ մէկտեղ, հնարեց մաթեմատիքի այն ամենաբարձր ու ամենազարմանալի ճիւղը՝ որ կը կոչուի հաշուողութիւն, (calcul) որուն հիմը կը կաղմնն այն անհու- նապէս փոքրիկ քառակուսիները, այն կարծես գիւթախն գործիքները՝ որոնք հրաշքներ կը գործեն բնագիտական, աստղագալխական և մեքե- նական գիտութեան մէջ: Ու Նեւտոնի քով կը կենայ Լաիլլաս, ուրիշ մեծ խորհող մը՝ որ շատ պտտիւ գտած էր Նաքուէն Ա.է, և որ ինքն ալ մէկս մեծ մարդաց նման միտքը սեւեռած էր ուրիշ անտեսանելի օրէնքի մը վրայ, այն աիւղերական մեծ և դաղանալից օրէնքին, որ կը մղէ յառաջ, մշտնջենապէս գէպի առաջ արեւներ և միլիոնաւոր լուսա-ւորներ՝ ստանելով զամանք անտեսանելի և խորհրդաւոր վախճանի մը:

Մեր նպատակը չէ մի առ մի նկարագրել հոս այն բոլոր անմահները զոր Տըլարօշ ներկայացուցած է իր շողչողուն կաճառին մէջ: Միայն այս քանի մը ակնառար դէմքերը հոս մէջ բերինք, զապախար մը տալու

համար զօրութեանը վրայ խորհուրդին կամ խորհույ մարդոց, որոնք քնդհանրապէս կ'անդամուրն անգէտներէ։ Բոլոր պատմութիւնը արդէն վկայ է այդ զօրութեան. բոլոր աշխարհ կը փառարանէ միաքի զօրութիւնը և դարերը չեն կրնար աղարտել կամ նամայնել փայլը անունի մը որ կը ներկայացնէ միաքի կամ խորհուրդի զօրութիւնը։ Ո՞վ էր Սոկրատ. ինչո՞ւ բնաւ չմոռցուիր իր անունը դարերու հոլովման ու ժամանակի գնացքին մէջ, որ ամէն բան կ'առնէ կը տանի իր հետ։ Սոկրատ չլնած է փիլիսոփայական դրութիւն մը, խորհուրդը մարմնացուցած է. և ո՞վ է Պլատոն որուն անունը կը յեղեղուի քաղաքակրթեալ աշխարհի բոլոր ուսեալ ակումբներուն և ուսումնական հաստատութեանց մէջ։ Պլատոն այն խնամախօսն է որ Սոկրատի փիլիսոփայական դրութիւնը վերտնին արադրած է և փոխանցած է զայն ուրիշներուն։ Եւ այսպէս բոլոր փառաւոր անուններուն վրայ մէկ ախարի մը բաւական պիտի ըլլայ ցոյց ապաւ մնալ խորհուրդներուն մեծ զօրութիւնը ու մշտնջենական համբաւը։ Սոլոն խորհեցաւ և օրէնք չլինեց, իրաւունքի և ուղղութեան գաղափարները մարմնացուց և իր անունը կայ ու կը մնայ անմուռ։ Արիստոտէլ չլինեց խորհուրդի մեծ գործիքը, արամբանութիւնը։ Միքայէլ Անճէլօ և Քրիստափոր Բէն հայտնաւ մայր եկեղեցիներ չլինեցին, խորհուրդը ճարտարապետական ձեւով մարմնացուցին և ատենց մարմնացուցած անտեսանելի խորհուրդներն ալ անտեսանելի չեն. անոնք ուղղակի կը խօսին մեր աչքերուն, ու մենք կը ականենք և կը չլանանք անոնց փառքէն։ Չմոռնանք այն զոյգ մը մեծափառ անունները, Կիլերոն և Դեմաթենէս՝ որոնք իրենց խորհուրդներէն չլինեցին աստեղաբանութիւններ՝ որոնք ճարտարապետական շինութեանքներէ աւելի հայտնաւ կը կենան բոլոր անցնող դարերուն մէջ։ Չմոռնանք նաեւ մեր Հայագի Պարոյրը, մեծ ճարտարափօսը, զոր Յուլիանոս իրեն ուղղած մէկ նամակին մէջ կ'անուանէ « յորդառատ և անարգել գեալ պերճախօսութեան » և որուն համար Գրիգոր Աստուածաբան Յոյնը չքաշուիր ըսելու. « Անչըքեցան փառքն Աթենայ պաշտառք ի դասն ի յօրհատէն »։ Այդ պերճախօսութեան գեալը կը ըզխէր խորհող միաքին ակերէն. այդ առանց աղագային խորութեան գովեալի տողերը նուիրուեցան միաքին որ իր նրբին և առատ խորհուրդներով ամէնուն պաշտումին առարկան եղեր էր։

Այս է ահա խորհող միաքին զօրութիւնը աշխարհիս մէջ, և մի մտածէք երբեք թէ մտածող միաքերը աշխարհէս և գործնական կեանքէն անջատուած, առանձնացած էակներ են։ Արդարեւ տեսակ մը առանձնութիւն կայ անոնց մէջ, որ յաւէտ առ երեւոյթս է։ Անոնք կը նմանին կղզիներուն որ կը կենան վտեմ առանձնութեամբ մը ծովուն կուտակագէղ պիքներուն մէջ, բայց խորունկէն կցուած են մայր երկրին հետ, ինչպէս փիլիսոփան ալ խոր ու թաքուն յարաբերութեամբ մը կապուած է մարդկութեան հետ։ Հսկայ նաւերու պէս են, որ իրաւ ծանծաղ ջու-

բերու վրայ չեն կրնար շարժիլ • Բայց տուէք անոր խորունկ ու լայնա-
տարած ծովեր և ահա՛ բարիքներով բեռնաւորուած աշխարհի բոլոր
ազգերուն կը ծառայեն : Անոնք երբեմն իրենք իսկ ճշգիւ գիտակից չեն
այն գործնական ծառայութեանց որոնք պիտի հետեւին իրենց հետազո-
տութիւններուն : Չուա ճշմարտութեան սիրահարներ, բոլոր սիրտով և բոլոր
էութեամբ կը հետապնդեն ճշմարտութիւնը, առանց վայրկեա : մը իսկ
մտածելու թէ գործնական կեանքին մէջ ինչ բանի պիտի ծառայէ ան :
Պատահած է որ զայրոյթ ալ զգացած են ճշմարտութեան կամ Գիտու-
թեան պէս վսեմ բան մը հատարակ կեանքի մէջ կիրարկուած տեսնե-
լով : Պղատնի համար կը սրամուրի թէ ճշմարիտ զայրոյթ զգաց, երբ
որ մը տեսաւ որ իր երկրաշարժութեան աշակերտներէն մէկը յիորձեր
կ'ընէր գործնական նպատակի մը ծառայեցնելու համար չափազիտական
ճշմարտութիւններէն մէկը : Ասոնք հին գաղափարներ էին անշուշտ : Նոր
խորհողներուն մէջ պիտի չզանուի մէկը որ վերացական գիտութեանց
կիրարկութիւնը սրբապղծութիւն համարի : Բայց անոնք ալ յաճախ իրենց
հետազոտութեանց մէջ երբեք չեն մտածեր թէ իրենց սրտած ճշմարտու-
թիւնը ի՞նչ գործնական օգուտներ պիտի ունենայ յետոյ • Բայց անանց
այգպիսի մտածութեանց, առանց ս և է գործնական շահ ակնկալելու,
անոնք անդու ջանքերով կը խուզարկեն բնութիւնը՝ անոր ծոցին մէջ
սրահուած ճշմարտութիւնները երեւան հանելու համար, և աւելի եռանդ,
աւելի՛ յարատեւութիւն ցոյց կուտան զանոնք վեր լոյսի մէջ բերելու
քան որչափ պիտի ցոյց տային Ափրիկեան երկրին խորերէն վեր բերելու
համար խոշոր, փայլուն ազամանդի բեկորները : Յիշանքին երբ իր
թուցիկով փորձեր կ'ընէր ամպերուն մէջ դանուած երկկտրականութիւնը
երկինքներէն վար իջեցնելու համար, բնաւ չէր երազեր իսկ որ այդ
հետազոտութիւնները վերջ ի վերջոյ պիտի յանգէին այն գիւտին՝ որով
այսօր շանթը իր վերին բարձրութենէն վար իջնելով խոնարհ թղթատար
մը կ'ըլլայ մեզի՝ մեր պատգամները, մեր խորհուրդները և մեր լուրերը
երկրիս ամենահեռաւոր ծայրերը տանելու : Նւ տակաւին ինչեւ կատու-
րած են գիտութեան մարդոց վերացական խորհուրդները : Անոնք յաղ-
թած են ծովուն և անոր փոթորիկներուն : Խորհող մարդը յաջողած է
մագլցել մինչև երկինքները և սրտնել լուսաւորներուն գաղափարները :
Կայնելով երկրագունդին վրայ և երկրիս շրջանին աբամադիժը իրեն
խորիւս ընելով՝ զայն իբր կանգուն ձեռքը առած և անով անհուն եր-
կինքները չափած է : Աստիճան առ աստիճան՝ վեր ելած և հետզհետէ
աւելի և ալ աւելի յանդգնելով չչափած բան մը չէ թողուցած ամբողջ
երկինքին մէջ : Չափած է այնպիսի լուսաւորներու հետաւորութիւնները
որոնցմէ լոյսը մէկ երկվայրկեանի մէջ 180,000 մղոն, տեղ կ'երթայ և
հազարաւոր տարիներէն կը հասնի մեզի : Ո՞վ չհիմար, ո՞վ չապշիբ, ո՞վ
չշլմորիբ միաքի զօրութեան մը վրայ որ ասանկ խելքէ միտքէ վե-

անձրպեանները կը չափէ կը չափչփէ, իբր թէ իր տանը պարտէզը եղած ըլլար ան: Խորհող միտքը աւելի յառաջ կ'երթայ և ձեռքը տանելով գիտութեան կշիռը՝ կը կշռէ ձգտութեամբ այն անհուն արեւը՝ որ երկինքին վրայ այնքան չքեղատէս կը վառի և կը յանդգնի աւելիին, երկրիս վրայ գտնուած գրեթէ ամէն բաները վերլուծելէ վերջ, վեր կը կարկառէ իր ինքզինքն ձեռքը, վերլուծելով գտնելու թէ ի՞նչ տարրեր կը պարունակեն անձրպետին ամենահեռուոր ծայրերը գտնուող գունդերը: Կը հարցաքննէ զանոնք իրենց պարունակած ոսկին, աքծաթին, երկաթին և ուրիշ թանկագին մետաղներու մասին. կը հարցնէ անոնց թէ ունին արդեօք ոսկի կամ արծաթ և անոնց ամէնէն հեռուորները անգամ, որոնց զոյսը մեղի հաղարասոր տարիներէն վերջը կը հասնի, խանարաբար պատասխան կը զրկեն լոյսի մեղմիկ ճառագայթներու միջոցով մարդուն յանդուգն հարցումներուն: Անոնցմէ ոմանք կը պատասխանեն. «Այո՛, ունինք, մենք ալ ունինք առոնցմէ: Արծաթաթիւներուն աչքը լոյս»: Եւ մարդկային խորհող միտքն է որ դեռ չգտնուելով բնութեան հրաշոյի յայտնութիւններէն, չգտնուելով այն միլիոնաւոր արեւներէն և աշխարհներէն՝ զորս հզօր հեռագիտակները իրեն կը յայտնեն, միջոցը գտած է անդադար լուսանկարելու և իր առջեւ յայտնի ընելու այն ամենահեռուոր գունդերը և արեւները՝ զորս ո՛չ իսկ ամենահզօր հեռու գիտակները կարող են ցոյց տալու:

Ահա թէ ինչ կարող է արտագրել մարդկային խորհող միտքը հին դարերէն սկսեալ մինչեւ մեր օրերը: Եւ մի խորհիք թէ անոնք ստիպուած կամ առանց հաճոյքի է որ գործածած են իրենց միտքին կարողութիւնները: Մտաւոր գործունէութեան մէջ հաճոյքի ազդեւր մը կայ որուն հետ բազմաթիւ կարելի է ունի ուրիշ հաճոյք կամ ուրախութիւն: Ուրիշ հաճոյքներ, զգայական կամ մարմնական, մեղմացուցիչ հանգամանք մը ունին. իսկ այս՝ կենդանի ու կորովի, անոնք ժամանակաւոր եւ վաղանցիկ են. այս՝ տեւական եւ մնայուն. անոնք հարեւանցի ու ծանծաղ. այս՝ հաստատուն եւ խորունկ, անոնք չլազրգիւ ու անհանգարտ. այս՝ հանգարտ եւ անդորր:

Անցեալ դարու մեծ գիտնականներէն մէկը՝ Ակասի, կը պատմէ թէ ինք օր մը իր ամենամեծ ճաշը ըրտու եւ ամէնէն հաճոյակից կերպով, և թէ ինչպէս եղաւ առ: Այցելութիւն մը տուած էր մեծ Գերման բնագէտին Օքլենի: Արդ, Լօրէնս Օքլեն շատ հարուստ էր ուղեգով, բայց շատ աղքատ՝ քսակով: Ուստի երբ Օքլեն նոյն օրը իր սեղանին հրաւիրեց Ակասի գիտնականը, անոր առջեւ դրաւ միայն երկու տեսակ կերակուր. առանց մէկն էր խորոված գետնախնձոր, իսկ միւսը խաշած գետնախնձոր: Ինչ աղքատիկ ճաշ փափկաճաշակներու համար: Սակայն մինչ Ակասի, երկուստարդ բնագէտը կը նստէր մեծ եւ հետազօտիչ գիտնականին քով, Օքլեն սկսաւ պարզել եւ բացատրել անոր՝ իր կատարած

Հետադարձութիւնները ընտանիքի փոխադարձութեան մէջ. ու այս ամէնէն հրճուելից բանն էր երիտասարդ Արաքիին համար. «Երբեք, կ'ըսէ ան, տանի համեղ, ասանկ սքանչելի գեանատնծօրներ աճած չէին ասկէ առաջ այս մեր մոլորակին վրայ, վասն զի մարդուն միտքը կարծես կը խառնուէր մեր կերածին հետ, եւ ես իրապէս կը լափէի անոր միտքը մինչ կը ծամէի իր գեանատնծօրները»: «Կը կրկնեմ, կ'ըսէ Ակասի, երբեք ոչ անկէ առաջ եւ ոչ ալ անկէ վերջը այդ տեսակ հաճոյական, բերկրա ից ճաշ մը չըրի»:

Իցիւ թէ մինք ալ քիչ մը աւելի միտք, քիչ մը աւելի խորհուրդ խառնենք մեր ամէն դօրծերուն մէջ. քիչ մը աւելի խորհել սորվինք և աղուչներու պէս չ'իշխանք այս հրաշափառ տիեզերքին մէջ:

Քոճ. ՅԱԿՈԲՈՍ Է. ՀԷՃԻՋԵԱՆ

Թ Ա Շ Կ Ի Ն Ա Կ Ն

Գարծեալ ձեռքդ քաւկիմակ կայ,
Եւ այս անգամ լայն, նեփ ներմակ,
Բոլորածեւ զերդ լուսնկայ,—
Պարիկի՛ մ'ե՛ գոգցես վերմակ:

Մեծ է քեւ, ալ յոյժ նրբիմ.
Հանճա՞րդ է՞նա յոսայն փոխուած.
Մասունքդ եզերքն անոր օրջիմ, —
Գոգցես դաւնակ մ'ե՛նա կախուած:

Այլ քաւկիմակն ոչ ունի բառ,
Յիւր ծայրն ասելոյ ոսոս խաղայ.
Դաւնակն, այն է՛ բերանդ անճառ,—
Մեղը ի շրթանցդ յիմ սիրտ տեղայ:

Բաբէ, սակայն, արես խորի՛
Մեղրն, եւ կամ հոն լուծուի յարսուս.—
Տո՛ւր ինձ ներմակ, լայն, բոլորի
Թաւկիմակդ այլ, Սե՛ն, ալ ո՛չ Յոյսս:

ԵՂԻՍ ՏԷՄԻԸԻՊՈՇԵԱՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ



ՍՈԿՐԱՏ

Ա.

ՍՈԿՐԱՏով կը դրուէի ճշմարիտ հիմը փիլիսոփայութեան Յունաստանի մէջ, վասնզի նա է որ իր նախորդներուն յանդուգն ու կանխահոս հաշկեցողութիւններէն, որոցմով նոքա կը ջանալին դանել տիեզերաց նախահական նիւթը, սկզբնական գոյացութիւնը, մտքերը դարձուց նոյնինքն մասնութեան ու անոր օրէնքներուն վրայ, ինչ որ հիմնական ու կարեւոր քայլն էր, քանի որ միտքը պիտի ըլլար ամէն գիտութեան հեղինակը ու հետեւաբար անոր ծանօթութիւնը պարտէր կանխել ամէն այլ հետազոտութիւն եւ խոյլ: Բայց, Սոկրատի վրայ խօսելէ յառաջ, կ'արժէ սուղ ակնարկ մը նետել Նախասոկրատեան կողմած շրջանին վրայ, որ ԹԱՂԵՍով կ'սկսի (600)ն Ն. քան զՔր.) եւ կը հասնի մինչեւ Սոկրատեան (Ճրդ. դար Ն. քան զՔր.) ուր բուն Յունաստանէն դուրս իր առաջին քայլերն առնուել սկսաւ յոյն իմաստասիրութիւնը, այսինքն կը բռնէին անկախօրէն մտքին հետամտութիւնը լուծելու սկզբն ու վախճանի խնդիրները:

Այդ շրջանին մէջ կը գտնենք քանի մը դպրոցներ եւ մի քանի առանձնակ դէմքեր: Յունիական դպրոցին կը պատկանին Թալես, Անաքսիման եւ Անաքսիմանդր, երեքին Միկտացիք, որոց առաջինն իրբեւ նախանիւթ տիեզերաց կը դնէ ջուրը, երկրորդը իրբեւ աւելի նուրբ գոյացութիւն՝ օդը, եւ երրորդը՝ անհուն մը, անորոշ ու անձեւ էութիւն մը որ կրնայ ամէն բանի ձեւն առնուել ու ծնունդ տալ համայնից: —Սոյն դպրոցին մէջ կ'առանձնանայ Հերակլիտ (ծն. յԵփեսոս), միինը որ պէս կը կոչէ զայն Արիստոտէլ, որ ունայն կը համարի իր դպրոցակիցներուն խոյլը տիեզերաց առաջին սկզբունքին մասին, ու լինելութեան (devenir) վարդապետութիւնը —արդի ժամանակաց մէջ նորոգուած Հելլէնէ ու Անգլ. դպրոցէն— կը քարոզէ տխրութեամբ: «Ոչինչ է, կ'ըսէ, ամէն ինչ կը լինի:» Ամէն ինչ հոտում մ'է, ամէն ինչ յարաժամ փոփոխում. միւսնոյն մարդը չի կրնար երկիցս նոյն գետին մէջ լողանալ, ամէն ինչ է ու չէ միանգամայն, ու ամէն ինչ հակասութիւն. կ'ապրինք ու կը մեռնինք միանգամայն, կ'ապրինք այլոց մահը եւ կը մեռնինք այլոյ կեանքը. նոյն էակը արթուն է եւ կը հսկէ, երկատարող է եւ ծեր: Հակասականները նոյն են, եւ չկայ ներդաշնակութիւն առանց ընականութեան ընդգլխակցութեան: «Բնութեան պայքարն է մայր ամէն իրաց»: Այս անհաստատատեութիւնն ու հակառակաց միութիւնն է օրէնք հաստատուն եւ ճակատագրական: Հերակլիտ գոյութիւնը հուրի պէս

կ'ըմբռնէ, որ կը վառի ու կը մարի, կայ ու կ'ապառի միւսնոյն տոնն . հուրը լինելութեան առած տեսանելի ձեւն է, բայց նրբանիւթ հուր մը, կենդանի եւ մտաւոր հուր, նիւթ եւ խմացականութիւն միանգամայն, «Աստուածային հուր մը, որ ամէն բան կը կառավարէ առանց երբեք շփանելու» : Իր ձեւատիպութեանց մէջ հարկաւորութեան օրէնք մը ի յայտ կը բերէ որ արդարութիւնն է, վասն զի լինելութեան ներքին մտածումն է, եւ ինքն իսկ է Աստուած, իրաց մէջ ներգոյ, ոչ անոնցմէ դուրս եւ անոնց վերեւ : Տիեզերաց մէջ զօրութեանց քանակն անփոփոխ կ'ընդունի Հերակլիտ, ճիշտ այսօրուան գիտութեան պէս, եւ զօրութիւնք յերեար կերպարանափոխուող . տիեզերական շարժումն յաւիտէնական է, ու այս շարժումն իր համաչափեալ ելեւէջը (rythme), իր փուլերն ու շրջափոխութիւնն ունի . օր մը «տիեզերական հրկիզումը պիտի ջնջէ ամէն բան, բայց այդ վերջնական վիճակ մը չպիտի ըլլայ, այլ փոխանցում մը միայն դէպ ի նոր աշխարհ մը, եւ այսպէս յանհուն» : (Տես Ալֆրէս Ֆուլիէ, Պատմ. փիլ.) : — Սոյն դպրոցին մէջ դարձեալ աւելանձին հանգամանքով կ'որոշուի Անաբազոր (ծն. ի Կլադովէն), Պէրիկլէսի ուսուցիչը, որ հիմնադիրը կրնայ համարուիլ փիլիսոփայական աստուածադաւանութեան (théisme), որ անհուն իմացականութիւնը ընդունեց անկերպարան խառնակ նախատարերց քառսին մէջ շարժում, կարգ ու կեանք մտցնող . «խմացականութիւնը եկաւ եւ ամէն ինչ ի այտ, ի ձեւ եւ ի կերպարան ածեց», ինչպէս Եզնիլ պիտի ըսէր : — Հիւլեական կամ Աբդերեան դպրոցը, որոյ հիմնադիրն եղաւ Լեւկեպպոս ու գլխաւոր ներկայացուցիչը Դեմոկրիտ, հարկ չտեսաւ Անաբազորի խմացականութեան, ու հիւլէներով ու շարժմամբ բացատրեց գոյութիւնը : Դատարկութեան մէջ ներքին հարկաւորութեան մը համեմատ կը շարժին հիւլէք, որ իրաց նախնական անբաժանելի տարերքն են, եւ իրենց մեքենական յօդմունք ու բաժանմունք յառաջ կը բերեն էից կազմութիւնքն ու քայքայմունքն, ամենայնի կեանքն ու մահն : — Պիւրագորականութիւնը, զոր Իտալիոյ Կրոտոն քաղաքին մէջ (Մեծն-Յունաստան) հիմնեց Պիւրագոր (ծն. ի Սամոս) եւ որոյ նշանաւոր հետեւողքն են Փիլոլաոս, Աբիդաս, Տիմոն, Եպիքարմոս, Յոնիականաց մեքենականութիւնը վերածեց տիեզերական ուսողութեան (mathématique) ու ամէն ինչ մեկնեց թիւերով, զորս ոչ միայն էից օրէնքը, այլ նոյն իսկ կազմիչ տարերքն ու ներքին իսկութիւնն համարեց : «Մաթէմատիքով սնած, թուոյ ու իրաց հանդիսութեանց վրայ հիացած, կ'ըէ Արիստոտէլ, Պիւթագորեանք խորհեցան թէ թուոյ տալերքն ամէն էից տարերքն են, եւ թէ երկինք համայն ներդաշնակութիւն մը եւ թիւ մ'է» : Աստուած գերազոյն միութիւնն է որ զանհունը կը գրկէ ու յինքեան կը պարուրէ բոլոր հոկաւանքները, մարդուն հոգին ալ թիւ մ'է, մարմնոյն ներդաշնակութիւնը, որ գործարանաւոր

բութեան քայքայումէն յետոյ կ'ապրի եւ հոգեփոխութեամբ կ'անցնի մարմնէ ի մարմին: Մին է բարեաց ազրիւր: Ուստի առաքինի մարդը այն է որ Աստուծոյ, գերադասն միութեան նմանիլ կը ձգտի. թիւն ու թուականութիւնն ամենուրեք են. մոլորակայ խումբերն ալ միջոցին մէջ երկնային սարանցութիւններ կը կատարեն, ու բովանդակ ափեզերք յաւերժական սլար մ'է, ուր շարժմունք եւ ձայնք որոշուած են թուոյ օրէնքներով: Գոյութիւնը մտածութեամբ բացատրելու փորձ մ'է այս, որուն յանդգնութեան վրայ կը դարմանայ Հէկէլ, վասն զի «մէկ հարուածով զգայական աշխարհը կը ջնջէ ու մտածումը կը նկատէ ափեզերայ խալութիւնը», ըստ որում մաթէմատիքը արամաբանութիւն մ'է, միայն թէ Պութագորեանք իրաց թուական սահմանութեանց վերացումները կ'իրականացնեն եւ, ինչպէս կ'ըսէ Հէկէլ, ի վրայութիւն կոչուած Ալֆ. Ֆույլէէ, առանց ճշմարիտ բացատրութեան կը թողուն շարժումը, կեանքը, թանձրացեալը: Անուբանալի է նաեւ Պութագորական դպրոցին ծառայութիւնը ուսողութեան յառաջացման համար. եւ ինքնին հնութեան մէջ մեծ հաստատութիւն մ'եղած է այն, միանգամայն կրօնական, իմաստասիրական, բարոյական ու աշխարհաբիւրի խտօրէն կազմակերպուած դպրոց մը, ուխտ մը միաբանական, իր ներածման աստիճաններով, որ եւ շատ մը քաղաքներու մատակարարած է ընկերական ու վարչական բարեկարգիչներ, թէպէտ հակառակութեան ու հալածման ալ ենթակայ եղած:—Նախասոկրատեան շրջանին մինչնաւորապէս կը դպրոցն եղաւ Ելեական (Ec. Eleate) կոչուած դպրոցը յանուանէ Մեծն-Յունաստանի (Իտալիա) Եղէա քաղաքին, ուր հիննեց զայն իր ճերմութեան հասակին մէջ Քսենոփան, որուն միւս անուանի վարդապետներն եղան Պարմենիդ, օրէնադիր իր հայրենեաց, մեծն ըստ Պլատոնի, մեծարոյն եւ անաւորն՝ գործածելով, կ'ըսէ դարձեալ Պլատոն, Համերոսի բառերը, եւ Զենոն Ելեակցի, որուն կը վերագրէ Արիստոտել Տրամարանութիւնը (dialectique) հիննած ըլլալու պատիւը, ինչպէս կ'ըսէ Բօլ Ժանէ: Համակ համաստեղածեան է այս դպրոց, զնստուած եւ զափեզերք մի միտակ էութիւն կ'ընդունի, անյեզլի, անշարժ, յաւիտենական, եւ աներեւոյթ ինչ կը համարի էից բաղմունքութիւնը, շարժումն ու փոխախտութիւնը: Քսենոփան, իմաստասէր հագներդու, կ'արտասանէր բնութեան վրայ իր քերթուածոյն սուղերը, ինչպէս Պարմենիդ եւս յօրինած էր նոյն նիւթին վրայ՝ զիւրազներդակ քերթութիւն մը, զի հնութեան մէջ փիլիսոփայք ալ Մուսայից լեզուով կը բացատրէին իրենց գաղափարները:

Քսենոփան նախ Աստուծոյ բացարձակ միութիւնը կը հաստատէ սոսաւ կապէն հարուածելով ու հեղնելով ժամանակին բաղմունքութիւնն ու զՀամեր եւ զՀեփոդ այսպէսնելով որ մարդոցմէ ետերելի համարուած ամէն բարք ու արարք վերագրած են իրենց աստեղծներուն: «Մար-

դիկ են որ կը թուին յառաջ բերած ըլլալ աստուածները եւ անոնց ընծայած իրենց չգաղտնական, իրենց ձայնն ու կերպարանը... : Եթէ եզները կամ տալիսները ձեռք ունենային, եթէ զիտնային նկարել իրենց ձեռներով ու դորձեր չինել մարդոց պէս, ձիւնն զձիւրը եւ եզները զեզները պիտի գործածէին պատկերեւեալ համար իրենց գաղտնարքն աստուածներու մասին, եւ պիտի տային անոնց մարմիններ նման անոնց զորս : Ընքեանք խօսի ունին :» Միաստուածութենէն շուտով կ'անցնի Քսենոփան համապատասխանութեան. «Աստուած էութիւնն է, ապա եւ յինքեան կը բաժնուի՝ դակէ դամէն էութիւն, եւ Աստուած միայն է :» Այս վարդապետութիւն աւելի եւս կը ճշդուի Պարմենիդի ձեռքով. «Էութիւնը գերազոյն կատարելութիւնն ունի, կ'երգէ նա, ըլլալով նման կատարելապէս կը գտնուի մը, որ կեդրոնէն ցլշաղիծն ամենութեք ըլլար նոյն եւ հաւասար, զի էութեան մէջ չի կրնար ըլլալ մաս մը աւելի զօրաւոր կամ տկար քան ուրիշը : Անսկիզբն է այն եւ անվախճան :» Մասածութիւն եւ էութիւն նոյն են, եւ երկուքին աստուածն են. նա մասածութեան իսկ է էութեան հետ իր բացարձակ միութեան մէջ :» Զենոն կատարի վիճաբանողն եղաւ ընդդէմ Զենոկանոց բաղմաւորութեան՝ եւ Հերակլիտի լինելութեան, եւ նրբին պատճառարանութեամբ ժխտեց շարժման եւ ընդհանրապէս նիւթին իրականութիւնը : Այսուհանդերձ Պարմենիդ երկու մասերու կը բաժնէ իր քերթուածն բնութեան վրայ, առաջինը կոչելով Զեմարսութեան, յորում կը հաստատէր ասոյդ իրականութիւնը, էութեան բացարձակ եւ անկզի միութիւնը, բանականութենէն իմանալի, եւ երկրորդը՝ Զիարծեաց, որու նիւթը առերեւոյթ աշխարհն էր, ըզգայարանաց ըմբռնելի, այս վերջինը զիջողութիւն մը զոր կ'ընէր հասարակաց մտաց, բնազխտութիւն յետ բնազանցութեան : —Աւերջապէս հաշի է յիշատակել, իբրեւ ուրոյն նշանակելի դէմք մը, զեմպեսոկլեա Ագրիգենացի (Սիկիլիա), բռնատուկ, խնամատէր, քուրմ, մոգ, բժիշկ, որ «աստուածակերպ պաշտուած, կ'երթար փողոցներէն, գլուխը երկդնելով ու կանաչ պատկերով զարդարուած», որուն հրաշքներ խօսի կը վերագրուէին եւ որու խորհրդաւոր անհետացումը տեղի տուած է իւր մահուան վրայ այլադան մեկնութեանց : Պարմենիդի եւ Հերակլիտի գաղափարաց ձուլում կամ հաշտութիւն մ'է աշխարհածնութեան մասին իր երեւակայած զրութիւնը : Նախնական շրջանէ մը յետոյ —սիրոյ շրջանը— որու նկարագիրն է միութիւն, եւ ուր ամէն տարերք խառնուած միաձոյլ են, ու ամէն հակասողները նոյնացած, կազայ բաժանման շրջան մը —Հեռի շրջան— որ՝ գանազանութիւն, ու բաղմաւորութիւն կը մայնէ իրաց մէջ : Չորս գլխաւոր տարր կ'սրուէ, հող, ջուր, օդ եւ հաւ, եւ երկու շարժիչ զօրութիւն, Սէր եւ Հեռ, առաջինը միացնող, ներդաշնակող, «հայր երջանկութեան եւ անմեղութեան», երկրորդը բաժնող, քայքայող : Եթէ Հեռը չըլլար, ամէն բան մի կ'ըլլար կամ կը

մնար. ուստի «ամէն ինչ Հեռէն կուգայ, բաց ի Աստուծմէ», որ սէրն է: Իմացական եւ խորձող սկիզբ մը կ'ոգեւորէ եւ կը շարժէ տիեզերքը, բայց ի ներքուստ, եւ մտածման գործողութիւնը, տիեզերքին մէջ չբջիւղով, Սէրը կը մայնէ հոն: «Նուիրական, անճառ ոգի մը կայ, որ ամբողջ տիեզերքը կը կորէ կ'անցնի իր արագ խորհուրդներով»: Մարդուն մէջ Սիրոյն կը համադրտաւորանէ բանականութիւնը եւ Հեռին՝ զգայարանքները: Պէտք է մտքորուիլ ամէն ատելութենէ եւ կենդանաշար սիրոյն անճնադուր քլլալ, պէտք չէ ոչ մէկ շնչաւոր էակի արիւնն հեղուլ, զի ամէն շնչաւոր էակ արտրած է սիրոյ: Առաքինի հոգին արժանի կը լինի յԱստուծո վերադառնալու, եւ ամէն ինչ ի վերջոյ պիտի մօնէ վերադառնալու սիրոյ նախնական միութեան մէջ:

Սյլազան եւ հակընդդէմ այս վարդապետութիւնք մտքերու մէջ առաջի մ'անորոշութիւն ու սկեպտիկ արամադրութիւններ յառաջ բերին եւ ծնունդ տուին Սովիեսներուն կամ խնասկաց (sophis'e), որոյ զէմ պայքարեցաւ Սոկրատ: Սովիեսները իմաստութեան եւ հեռորութեան վարժապետներ էին, որք իրենց վճարուած դասերուն կը յանդուրանէին երկասարդութիւնը, մանաւանդ հարուստը, որոյ վրայ սակայն ազիտաբեր ազդեցութիւն մը ի գործ դրին: Մտածող անխախ մտքին երեւան բերած իմաստասիրական նորանոր դրութիւնք արդէն հին կրօնական եւ լսողական աւանդութեանց ոյժը կտորած էին, եւ իրենք զիրենք կառավարող ուսանանք, որոյ թիւը հեազհեա՞ն աճած էր Յունաստանի մէջ, նախնեաց սովորութեանց եւ օրինաց տեղ նորահաստատ կարգեր ու կանոններ սահմանած էին ըստ քմաց վարչադիտաց, յաճախիկ փոփոխմանց եմթակոյ, որով բացարձակ արդարին ու բարեոյն հաւատքը ցնցուած էր: Իրաց այս վիճակէն օգուտ քաղեցին Սովիեսները համբաւ եւ հարստութիւն շահելու համար. անոնց թիւը շատ մեծցած էր ի Յունաստան եւ մանաւանդ յԱթէնա Տրդ գարու (Ն. Ք.) երկրորդ կիսուն մէջ: Կը քարոզէին թէ բացարձակ ճշմարտութիւն չկար, այլ թէ ամէն ինչ յարաբերական էր եւ ճշմարտութեան կամ սուտի երեւոյթ կրնար ունենալ. ուստի շահուց եւ պարողայից համեմատ կարելի էր ամէն գաղափարէ օգտուիլ, զայն ճշմարիտ կամ սուտ, օգտուելու կամ վնասակար ներխայնելով, քանի որ բարին յաջողին էր վերջապէս, ու խնդիրը հարկ եղած խռով ճարտարութիւնն ու արամազրկի գաղափարաց ճոխութիւնն ունենալուն մէջ կը կայսար: Եւ ահա գաղափարները ի դէպ եւ օգտակար կերպով գործածելու այդ ճարտարաբան արուեստը կ'ուսուցանէին Սովիեսները յաշնական ուսանանքուն վարչութեանց մէջ յառաջանալու եւ զիրքով ու հեղինակութեամբ եւ փարթամութեամբ փայլելու եւ ուրիշները գերազանցելու հետախու երկասարդներուն: Ասոնցմէ երեւելիներն էին Պրոսպորա, Դարգիա, Պրոսիկոս, Թրասիմախոս, Եւքիդէմ: Առաջնոյն

սիրելի սկզբունքն էր թէ «Մարդն է ամէն բանի չափը» այսինքն թէ իւրաքանչիւր անհատի համար իւր անձնական զգացողութիւնն էր միակ ստուգանիշ, եւ ըստ որում անհատէ անհատ զգացողութիւնը կրնար զանազանիլ, հետեւապէս կրնար ամէն ինչ ճշմարիտ կամ սուտ ըլլալ մարդուն համեմատ : Գորգիաս երբեակ նախադասութեանց մէջ կը բանաձեւէր իր սովետական սկեզտութիւնը, որք են, 1. «Ոչինչ կայ», 2. «Եթէ կայ ինչ, չի կրնար ճանչցուիլ», եւ 3. «Եթէ կայ ինչ ու կը ճանչցուի, չի կրնար ուրիշներուն հաղորդուիլ» : Այսպէս Սովետութեան երկու պետերուն զաղարարք կը յանգէին՝ միեւնոյն ժխտման, զի եթէ ամէն դատաստան ճշմարիտ է, ապա երեւոյթ է միտայն, եւ եթէ ոչ մի դատաստան ճշմարիտ է, ապա միտայն երեւոյթներ կրնանք ըմբռնել : Պատան Սովետը կը սահմանէր «այն որ արամարանութիւնը կը չեղեցնէր իր բուն աւարկայէն, որ է նրբմարիսը, եւ իր բուն նպատակէն, որ է բարին, զայն ընկու համար դործիք մը ազդեցութեան, հարստութեան եւ յաճախ սուտի», ինչ որ, կ'աւելցնենք, յատուկ է ամէն ժամանակի ու ամէն աեղւոյ իմաստասիրուն, որոց համար իրենց զիտցածն ու չզիտցածը, իրենց գայնդդոյն այստիտի սկզբունքներն ու ճամարտակ գրին ու լեզուն գործիք մ'են իրենց ձեռքին մէջ մտքերը պտորեւու, փռի փչելու միտմտաց աչքերուն եւ ճշմարտի ու բարւոյ խնդիրները յօգուտ իրենց շահագործելու, որպէս այնքան իրաւացի ու գեղեցիկ կերպով կը գրէ Ժօզէֆ Ֆապո, որ «La Pensée Antique»-ին մէջ (էջ 204) մատնանիշ ընելով ամէն դարուց եւ աշխարհաց զանազան դասակարգի Սովետները, — զի «Սովետութեան ծաւալումը պէտք չէ լով փակել ճրդ դարուն եւ Յուհատանի մէջ» —, որք «նպատակ կը դնեն իրենց՝ ըստ Իսոկրատաց խոստովանութեան՝ մեծ երեւցնել ինչ որ փոքր է եւ փոքր ինչ որ մեծ, բառերու պատիր կրկնակրեւոյթովը» : Այսու հանդերձ խոստովանելի է որ Յունաստանի Յրդ դարու Սովետներն ակամայ օգտակար արդիւնք մ'ունեցան, իմաստասիրական գաղափարաց մասին մտքերու հետաքրքրութիւնն արթնցնելով ու ամբադոյն փիլիսոփայութեան մը պէտքն զգալի ընելով, մանաւանդ իրենց գէմ հանելով զՍոկրատ որ այդ պէտքին գոհացման համար ա'յնքան կար'ուոր քայլ մ'աւանդ պիտի դար :

Ռ. Յ. ՊԵՏՐՈՎՅԱՆ



ԾՆՈՒՆԴՆԵՐ ԵՒ ԿԵԱՆՔԵՐ



Հողին կոյս արգանդը յղի էր լուսածաղիկին սաղմովը:

Կեանք-Արեւը իր ծնունդիչ ու արգասաբեր ճառագայթները զրկեց հողին, որուն տակ լուսածաղիկին սաղմը կը վրթկէր, ծնունդի իր նորուժ ճլուրուով փորձելով:

Հողը կ'էրկէր ու ծննդաբերութեան իր ցաւերը կը պատռտէին իր պորտը, ուր լուսածաղիկը կեանք կ'առնէր կամաց-կամաց, վայրկեանէ մը հողեւորուելու կենդանական աշխուժ պատրաստութիւնով:

Արեւը նոր ուժ մըն ալ տուաւ իր սիրակաթ դուակին ծնունդին, ու լուսածաղիկը պատռեց հողին կոյս թաղանգը, իր նորածինի փրփօշ գլուխը ցցելով իր հօրը բարերար դէմքին, կանաչուտրի փափուկ աղբամանին մէջտեղուանքէն:

Իր նորարարախ կուրծքը ուսեցաւ կեանքը ապրելու լայն տենչանքով, ու պուտ մըն ալ ցցուեցաւ ան հողէն, կենսատ ու դեռածիլ, մօրը արգասանդ-գիրկին մէջ:

Ապրելու հեշտանքը ու աշխարհի լայնութիւնը, յուզեց իր անբիծ լանջքը, երկինքին տակ, ուր կը բացուէր իր շուշան հոգին, ու ինքզինքը կը խառնէր կենդանականութեան բաղմամբունդ ցեղին:

Կեանք-Արեւը հրճուեցաւ իր նորածին զաւակին վրայ, և կենսատու շունչով զօրացուց, ուսճացուց զայն, իր արբունքին հասցնելով օրուան կէսին, որպէս զի ան բմալոյսնէ Կեանքը, արբենայ վայելքովը անոր հեշտանքներուն:

Ան կը գինոջնար նոր ու զրգուիչ հմայքովը այդ հեշտանքներուն, հոգ չէ թէ անխորհօրէր հովեր, — ցաւի չարաշուք ծաղիկներ, — զայլն ճկել երբեմն իր նորափթիթ հասակը՝ ծարփոտ սարսուռներ կ'անցնէին իր երակներէն, ու վրդովիչ տագնապ մը կ'աղնտէր իր հոգին, կարօտովը տենչանքի մը, որուն ի'նչ բլլալը չէր հասկնար:

Ծաղկատաններու դալարութիւնը վրայէն, հովին թեւերը կազդուրիչ շունչ մը բերին իրեն, որուն տակ սրտփայլն իր փափուկ թերթերը, որոնք կը թօթուէին տենչովը կեանքի վայելքին ու անձանթ՝ կարօտի մը զգացումին:

Փռչիւն չնչին հիւլէ մը եկաւ թառիլ յանկարծ իր կովոնին վրայ ու անոր քնքուշ հպումը՝ անճառ հեշտանք մը կաթեց իր երակներուն մէջ, որուն սարսուռին տակ ցնցուեցաւ լուսածաղիկը ու թօթուեց իր տերեւները:

Երբ սարսուռի նոպան անցաւ, լուսածաղիկը զգաց որ անհուն մեղկութիւն մը հոսեր էր հասակն ի վար, ու իր ազաղուն տերեւները ուժաթափ ու գունատ՝ նուազումի հեւքովը կը կախէին իրենց գլուխը:

Կրումի ուժ գին սաստկութեանը տակ, իր մարմինն ալ ընկճուեցաւ, ու լուսածաղիկը ծռեց մարմինը հողին, գլխիկը թաւալումով մը: Ան ատեն սարսուռ ցաւ մը ժայթքեց իր կուրծքէն, ու բոցեղ արցունքի մը պէս կաթեց հողին վրայ:

Լուսածաղիկին կեանքը հոգեվարքի ցաւը կուլար, որովհետեւ կեանքը իր շրջանը բոլորէր էր իր մէջ, ու ինք օ'ր մը մինակ պիտի ապրէր: Այդ էր իր կեանքը, ապրելու ճակատագիրն իր սահմանադրութիւնը:

Արեւը թեւ տուէր էր շատոնց մայրամուտի հորիզոնին, ու գիշերին շուքերը կ'իջնէին բնութեան վրայ, խառնի սեւամուսյլ պատանքին մէջ առնելով ամէն բան:

Երբ լուսաւորներուն հրախառն ցանցը սկսեւ էր աղօթել երկինքին կապոյտը, լուսածաղիկին հետքէն բան մը չէր մնացեր հողին ծոցին վրայ, որ զինքը արգասաւորներ էր դեռ առտուն, կեանք-արեւին հետ գգուալից իր սիրտաւքով ծնունդ տալով անոր:

Իր գերեզմանին տակ, առտուն իր ծնունդին հետ կեանք առնող ճգճիմ՝ թրթուռնէր, իրենց գիւղը բերած էին փուկ, իրբեւ վերջին եղիկի յիշատակարան մը, իրենց միօրեայ աննշան կեանքին:

Կեանքի պղծ եղբայրակցութիւնը, հեզնոտ ճակատագրականութիւնով մը կը նոյնանար տօնախմբութեանը հետ մահուան հանդիսաւոր պատարագին, Մայր-Բնութեան անկյարակոյ ու շրջափոխող ծոցին մէջ:

Լուսածաղիկին գերեզմանը սեփականող բնակիչներ, զայն ագտարակի մը վերածեցին օր մը, հոն խրճիթներ կանգնելով, ուր իրենց դուռը պատասպարեցին տարիներով:

Սերունդներ սերունդներու յաջորդեցին ու բարի պտպեր իրենց թոռներուն ծնունդը օղջունեցին:

Թոռներ ալ շարունակեցին նոյն դործը, իրենց ոչխարներուն, եղներուն, այծերուն, գոմէշներուն, ձիերուն, աւանակներուն ու քուսակներուն, ինչպէս հաւերուն, ճագարներուն ու աքաղաղներուն հետ:

Երկիրը զաւակներուն այս սերունդը սակայն, օր մը անհետացաւ, —ինչպէս անջատ ամբողջութիւններ՝ մարդկութեան ու կենդանականութեան հատուածէն, — հպատակելով յաջորդական այլասերումի մը, ու ժամանակը բա՛ն մը չորձանագրեց իր էջին մէջ, անոնց հետքէն ու յիշատակէն, իւր նպատակի մը, կոչումի մը ու սահմանուած օրէնքի մը արժանի կեանքեր:

Բնութիւնը ծածկեց իր մուգումի քօղը անոնց վրայ, ու մուգաւ անոնց յիշատակը, բա՛ն մը չպահելով անոնց կեանքին հետքէն:

Անփոյթ համակերպութիւնով, ան կը շարունակէ իր դործը, տիեզերքին ամէն կողմը:

Մայր-Բնութիւնը օր մը յդի էր սաղմովը իր մեծ մէկ զաւակին, զոր իր երիտաւորդական կարշնեղ արգանդէն պիտի ծնէր:

Երբ անոր ծնունդը զգաց տիեզերքը, սարսուռը ուրախութենէն անոր դալուստին, ու հրաշալից ոլլոլլումով ցնցուեցաւ:

Երկինքները դողացին ու լուսողարդուեցան անոր հրաշափառ ծնունդին պատիւով, և երկիրը զաւակները հրճումների ովսանաներով ողորդեցան:

Ենա՛ւ ան, իր մեծ էութեանը հակառակ, գոմի մը անկիւնը, որ նուիրական խանձարուքը եղաւ իմաստուն ու հրաշափառ էակին:

Եղբայրակից արարածներ, խանդաղատեցան անոր մեծ միակութեանը ու բարձր անեղութեանը վրայ:

Մեծցաւ մեծ մանուկը ու անզոյգ կեանքը, թէեւ նետեց կեանքին վրայ, սպրեցաւ, ու մեռաւ, ինք ալ անցնելով Կեանքի Մեծ Օրէնքին մէջէն, իր դերին մէջ Բնութեան իւր որդեգիր զաւակ:

Մեծ իմաստունը չուզեց մեռնիլ, Կեանքը, իր մէջ, իմաստ մը եղաւ, կոչում մը, նպատակ մը. զա՛յն քարոզեց ան, ու անոր նշանակութեան գիտակցութիւնը վարդապետեց:

Դարերը իր Գործքին ու Կեանքին մեծութիւնը կ'արձագանգեն: Ու իր վարդապետութիւնները խոր պատրաստութիւններն ըստիւր կանգնած են մարդոց ամբողջ ընդմիութեան մը մէջ, որովհետեւ անոնք բարձրացուցած են Կեանքի իմաստին հոյակապ անգրին:

Ուզէ՛ն Կեանքերը նմանութիւն մը գտնել անոր հետ:

ՉՄԵՌ ԳԻՇԵՐ

Կողքայ դուրսն ուժգին հովը ձմեռուան
— Հիմաւորց ոգի.

Յւ կ'եղերեղէ ողբերգը մահուան,
Արցունքի, սուգի:

Ու ձիւնն՝ սպիտակ խորհրդանշան
Յոյսերուս ստամո՛ծ,
Կը տեղայ անդուլ, — ուխտաւոր դաժա՛ն, —
Թող, քաժառայած:

Հոն, սննկիս մէջ, մեմորան քափուր,
Տանաւն իմ խղճանց,
Յս, անխուս ոգի, պատարագն եմ լուս,
Պատճառսնն անանց:

Ու կը խղամ հոն, դժնէ գիշերին
Հսկող մեհական,
Մինչ հովը կ'երգէ սեւ պատճառսննին
Անկերջ շարական:

Խոհեր՝ գլխիս մէջ, սերեր՝ սրտիս մէջ
Տակաւ կը ստախն.
Հոգւոյս պէս՝ քափուր, անոյս, կիսաւելջ,
Սննեակս է լրսին:

Կ'երկարի գիշերն ու ցուրտ է կարի,
Հոգեւով լեցուն.
Ու կը զգամ տակաւ՝ ներքս կը մարի
Ջահն երազներուն:

Ու կը զգամ տակաւ հեռութիւնն անհուն
Յուրս ստանձնութեան,
Մինչ դուրսն՝ արեւուրտ վայրիւնն հովերուն
Կողքայ յախտեան:

— Խո՛յս տրէ՛ք ինէ սեւ խորհուրդներու
Պայքար խօյական,
Սյս պատճառսննի վայրկեանէն հեռո՛ւ,
Դժնէ՛ ուրուական:

Այլ զանկիս մէջ, ո՛հ, մտածմանցն իմ սեւ
Հիւլէներ ցրտին
Կաճեաւ ա՛յլ դադար կ'առնեն ակներեւ
Ու հոն կը ստախն:

ԱՐՏԱՇԷՍ ՏԱՐՈՒԹԻՆԵԱՆ

ԱՂՈՒՈՐ ԼՈՒՐԸ

(ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Ոսկի Լոյս մը կը շողայ Երկինքին վրայ մթամած,
Ու մոզերը Երեկն ալ, Մելեոն, Գանապար, Պաղտասար,
Կը մտածեն աչքերնին դէպի հոր Լոյսը յառած:
— «Մեծ հոգի մը ծնած է, կ'ըսէ Մելեոն ապշահար՝
Իմաստութեան Գլխին մէջ կարդացած եմ»: Իր հոգին
Ոգոյում էր այդ պահուն Լոյսին անգայտ, բախանցիկ
Բեկբեկումով: Պաղտասար քառ յանկարձ Մելեոնին.
«Եթէ շարժի Լոյսն այդ մեծ՝ իրեն համբո՛ւն հետեւինք.
Գլուխնիս հակ երթալու համբուրելու համար Ան՝
Չոր այս Լոյսը դիւրօրէն պիտի ցոյց տայ անպահաւ.
Ու այն ասեմ գիշերուան մութին մէջէն դիտական,
Բոցէ հետք մը զծուեցաւ, Լոյս-շաւիղ մը ղոկեմաւ:

Ամենէն հուրը բոյրն առին եւ զմուռսը ու ոսկին.
Եւ քաղցին դէպի գործ հորիզոնը անբախանց,
Դողդղղացող լոյսերու ցալերուն տակ Երկինքին:
Արշալոյսն իր խաւարի ամբողջ խոյրը նետած՝
Ուր Աւօտը կը հանգչէր եւ կ'օրօրէր Բունն անոր,
Արքնցոյց զայն բոսորէ երեքին խառն առնուան.
Բայց Լոյսը, — որ վերը կ'որոշուէր դեռ՝ անսովոր
Դոյներուն մէջ՝ զոր երեքն կը հագնի երբ դիւրական
Մութին աչքերն առնուանց կը ժգունին, կը փակուին,—
Թէեւ այգին անորոշ փայլ մը չէր տար հո՛ն, հեռուն,
Բայց արեւուն առջեւ ալ կը պահէր իր ցալն անգին,
Միշտ մոզերուն ցոյց տալով Լոյսէ համբան փողփողուն:

. . . Ու կը քալեն. եւ զացած ասեմնին ալ՝ անկշիռ.
Իրենց անհուն զիտութեան առջեւ ցցուող հրաւերին
Վրայ անդուլ կը խօսին, սէգ, անհամբեր ու արբիւ,
Հարցնելով իրարու, վաղուան կեանքով հրնուագին:
— «Ի՞նչ ապարանք արդեօք մենք պիտի տեսնենք հեռունէն,
«Ըսաւ յանկարձ Պաղտասար, սուրբ տեսիլով մ'առնուն.
«Ո՞վ է արդեօք այն Տէրը որ փայլ կուտայ այս ասեմ
«Սա անմանօթ լոյսերուն: Մելեոն կ'ըսէր երազուն.
— «Ուրիշ՞ առած է արդեօք իր ուժն անեղ մեծութեան»: —
«Անտարակոյս Ան պիտի իր փառքին մէջ որոտայ.
«Շարժումներէն ամենուն հակասներն ալ յաւիտեան
«Պիտի հակին ու կը զգամ թէ հե՛ք հոգիս ալ հիմա
«Կը հասկընայ թէ ո՛րքան գեղեցկութեամբ մեծ է Ան»: —
Ըսաւ Գանապար որ հեռուն քան մը մտնով ցոյց կուտար,
Իբր թէ իր աչքերով դիտած քլլար անհրման
Աստուածացումը միակ, Մեծ Խորհուրդը հրաւաւ:

Եւ երբ պզտիկ համբէ մը գիւղակ մը կը մտնէին,
Որ ծածկուած էր ամբողջ ձիւնի խառով մը մաքուր,
Տեսան որ Լոյսը կեցաւ, ու իր ցովերն ալ անդին
Տանիքի մը շուրջն եկան ուսոսելու: Անձնասուր՝
Առաջնորդող Գիւսասդին, երեք մոզերն ալ կեցան.
Հորիզոնը ինչպէս որ կը հրդեհուի արեւէն,
Վերէն Լոյսը կ'ողողէր ամբողջ տունը անկեղծօք:
Խրհիթ մտան: Գարեւէ ի վեր այնքան ամէնէն
Սպասուած բարձր էութեան առջեւ հոն ծունց չոքեցան.
Կին մը, ծեր մը ու մանուկ հոգի մը որ կը ննչէր.
Խլէակներով կազմուած խանձարուրդին մէջ՝ անձայն.
Լոյսին ցովը կը դողար հակօքն շուրջը ոսկեհեր:

— «Ան է, բաւ Պաղասաւ, ձեռքերն իրարու կըցած».
— «Քայց ի՞նչ, ա՛ս է այն Հրգօր, այն Տիրական ուժը մեծ»:
Ու երկուքը միասին, Մելփոն, Գասպար՝ խոռովուած,
Սկսան հոն փնտել այն էակը լուսայեղծ,
ԶՈՐ անդադրում երազած, սիրած էին լռելեայն.
«Կարելի՞ է, կ'ըսէին, որ Լոյսը ցոյց տար մեզի,
— «Համբան՝ ուրիշ էալիքով զտնային մեծ Մեծիկան,
«Որուն մասին սուրբ գիրքը ա՛յնքան փառով կը խօսի»:
Ծերունին իրենց դառնալով, բաւ անոնց գլխահակ.
— «Այո՛, մոզեր, Լոյսը ձեզ աղէկ բերած է հոս տեղ.
«Ա՛ն է. անա Քրիստոսը որուն հետքը դուք գտաւ,
«Որուն փառքը կ'երգէ հոս աղօթարարին ալ անմեղ.
«Մ'վ գիտուններ, ամէն ինչ՝ պատասխան է ու հարցում.
«Սա յարդը որ դեռ ցորեն կը բուրէ հոս, կը տեսնե՞ք,
«Երկիրն է որ գգուանով կը պարուրէ անտեսում
«Հեղինակը Առաջին որ չի ընկնիր ա՛լ երբէք:
«Աղուր տղուն շուրջն եկող եզր ու Է՛ն ալ պզտիկ,
«Փութաքած են իրենց Տերն փառաբանել անմոլոր.
«Ու սա հայրը ուշադիր, եւ սա մայրը հիացիկ,
«Որ կը ծայրի իր գաւիթն. ու անցորդները բոլոր,
«Որոնք փափուկ, օղապար մեղեդիին ձայներէն,
«Դէպի մտուն են եկած, իբրեւ ընծայ բերելով,
«Է՛ն գեղեցիկը հօտին, կամ կուծ մը կար ձիւնեղէն.
«Սա հովիւր որ կ'երգէ արիւնգովն իր հոգեքով,
«Այս ամէնն ալ հոր յոյսի խօլ գինովներ են հիմա.
«Աղուր Լոյսը կ'աւետեն բոլոր իբրն ալ ձեզի,
«Ու ամէն ինչ նորածիլ հաւատով մը կը խայտայ,
«Որմէ բոլոր ապրող բան գրութիւնով կը լեցուի:
«Այս խեղճ տղան զոր հիմակ կը տեսնէ դուք, ո՛վ մոզեր,
«Անմեղութեան քաղցրութեամբ կ'ունուցանէ երկային
«Մեծութենէն շա՛հ հօր, բան մը տարբեր, շա՛հ տարբեր,
«Որ աւելի կ'անմահի եղանկութեան երազին.
«Կ'ուզէ որ Սէրը տրէ երկիւս վրայ անպարփակ,
«Անմահ սէրը որ բոլոր հոգիներուն մօտ կ'երթայ,

«Գրութիւնն է, ներումը, աղաւթիւնը համակ,
 «Անա ինչո՛ւ շատ անուշ, այնքան հէք է անկա,
 «Այնքան խեղճուկ որմէ ձեր էութիւնը կը յուզուի,
 «Եւ սարսուռով մը սեմոյս ինչպէս հով մը ամառուան,
 «Որ հունձէին մէջ կը դողայ, Սէրը ձեր մէջ ոսկեծղի
 «Իր քափանցիկ բաժակներն պիտի բանայ դիւրական. . . »:

Ու մոգերը անըքուկ մէկի կ'ընէին անոր.
 Եւ ծռելով Պլսիկին աւշեւ որ մի՛ւս կը ժպտէ,
 Յափեսումով մը աննուն ու սիրտերին անսովոր
 Պաղասանով մ'ալ ուռած առանց սակայն ոսկեներ
 Այդ Մանուկը հանչալու՝ Անոր աչքին մէջ փարփառ,
 Կը տեսնէին որ ամբողջ Մարդկութիւնն էր որ կուլար:

Թարգմ. ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

V^{te} J. DE BEAUFORT

ԱՐԵՒԵԼԱԳԷՏՆԵՐ ԵՒ ԹՈՒՐԲ ԼԵԶՈՒՆ

ԳՐԱԿԱՆ ՎԷՃ ՄԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՒ ԹՈՒՐԲ ԳՐԱԳԷՏԻ ՄԸ ՄԻՋԵՒ [1]

Եւրոպայի մէջ կան բաւական մեծ թիւով գիտնականներ, որոնք կը զբաղին ծագումովը թուրքական լեզուներուն եւ մասնաւորաբար Թուրք եւ Մանկու աղբաբարբառներուն: Սակայն, — բացի մէկ-երկու լրջախոհ արեւելագէտներէ, — այդ գիտնականներէն շատերը այդ լեզուներով կը զբաղին, կարծիքներ կը յայտնեն, առանց երբեք դուրս ելած ըլլալու իրենց աշխատանոցէն, եւ որոնք գլխաւորաբար սնած են այն հին տեղեկութիւններով՝ զորս իրենց հայթայթած են ճամբորդութիւններ, Լատին հնօրեայ բառարաններ եւ համբարտար ու յոգնալատտակ իրենց գիշերաշանութիւններով գիպուածաբար ձեռք բերուած ծանօթութիւններ, աւելի հին քան միւսները: Եւ այն ճամբորդները, որոնք այդ յօժարամիտ գիտնականներուն կը հայթայթեն ուսումնասիրութեան ատաղձներ՝ չունին այնքան լեզուաբանական ծանօթութիւն՝ որչափ միւսները չեն զգար նախանձաւորութիւնը եւ պէտքը տեղեկանուն

[1] Վերթոր Պերաւի Ռըվիւ եր. Բառի մէջ հրատարակած մէկ յօդուածը՝ Թուրք լեզուին վերայ, իր գէմը հանած է Թուրք անուանի գրագէտ մը՝ Ահմէտ Հիքմէթ, որ Մերվիթի Ֆիւնուրի մէջ բուռն պաշտպանողական մը կը նուիրէ այդ գառին: Բէշիտ Սաֆվէթ այդ յօդուածը ֆրանսերէնի վերածած ըլլալով Ալվրնց Հերբլէի մէջ անկէ կը թարգմանենք զայն իր շահեկանութեանը համար իբր գրական նշանակելի պարբար մը: որ իր մէջ կը խառնէ կարեւոր ուսումնասիրութիւն մը՝ Թուրք լեզուին վերայ:

Ծան. Խմբ.

շարժելու՝ անձնապէս կատարելու համար իրենց ուսումնասիրութիւնները սեղիւն վրայ :

Իրապէս, խնդիրը չէ այն տեսակ հարց մը՝ զոր լրագրութեան մէջ գրելի մէկ հարուածով կը լուծեն :

Իրենց իսկական արժէքովը ճանչնալու, գնահատելու համար ազգաբարձաւի մը ներութիւնները, հարստութիւնները եւ գեղեցկութիւնները, պէտք է երկար ատեն ապրած ըլլալ ամբողջութեանը մէջ այն ազգին, եւ յետոյ անոր զարգացած գաստկարգին, որուն կը պատկանի այդ լեզուն : Թէպէտ Օքսֆորտի, Վիեննայի, Բարիդի, Պերլինի, Սէն-Բեդեքսպուրիի մէջ, եւ թերեւս այլուր ալ, գոյութիւն ունեցած ըլլան արեւելեան լեզուներու վարժարաններ, լայնօրէն նպաստաւորուած իրենց կառավարութիւն երէն, բայց այն գիմնասիաները՝ որոնք կը պաշտօնավարեն հոն, չըլլալով բնիկներ այն երկիրներուն՝ որոնց լեզուն կը դասախօսեն, հազուադէպ լացառութիւններէ դուրս, կը նմանին այն խուլերուն՝ որոնք բաղձանքը ունեցած ըլլային երաժշտութեան դաս տալու : Երբեմն մինչեւ ամէնէն համբաւուած արեւելագէտներու զբաժնէրուն մէջ կը հանդիպինք անհետիւտութիւններու : Բան մը չարժէր նախանձաւորութիւնը եւ անսահման վատահոլութիւնը անոնց մէջէն ոմանց, որոնք տողորուած անճիշդ ծանօթութիւններով, մերկապարանայ սխալներով եւ ծաղրելի ցնորքներով, ամբողջ կեանքերնին կը զոհեն գրելու հազարաւոր էջեր, որոնց կը պակսին սակայն հաստատ հիմեր :

Պէտք չէ միեւնոյն ատեն մտածել թէ՛ այն բոլոր վրէպներով՝ որոնք կը սպրդին այս կերպով խմբադրուած գործերու մէջ՝ այդ աշխատութիւնները զուրկ են օգտակարութենէ : Ամէն բանէ առաջ, անոնք գիտական գործեր են, որոնք կը պարունակեն հազարաւոր անտիպ մանրամասնութիւններ եւ մասնակի հետախուզութիւններ՝ յաճախ խիստ ճշգրտաւ : Անոնք իրական ծառայութիւններ կը մատուցանեն մասնագէտներու, այն հարցերուն վրայ՝ որոնցմով կը զլաղին : Մասնագէտ ընթերցողին կը մնայ ընտրել իրեն՝ ճշմարտութեան եւ մոլորանքի շաւիղը :

Կայ սակայն դասակարգ մը ուրիշ գրագէտներու, որ Արեւելքով կը զբաղին՝ անսամթաքար հիւսելու համար անիմաստ ճամարտակութիւններ՝ ուր մարդ պարապ տեսլը կը փնտռէ յետին չնչին ծանօթութիւնը՝ որ միամտօրէն մտկերեւութային չըլլայ :

Ասոնք լրագրի թղթակիցներ են, կամ նմանօրինակ իմացական մշակումի տէր մարդիկ, — ինչ որ նուազ գէշ չէ, — որոնք ինքզինքնին հեղինակաւոր եւ լիահմուտ արեւելագէտներ կը նկատեն, զբաղելու համար երկրին լեզուով, գրականութիւնով ու բարքերով, որովհետեւ զիրենք Մարաիլիաէն Զմիւռնիա փոխադրող շոգեհաւէն ցամաք ելած ըլլալով, պղծիկ դադարի մը միջոցէն, առիթը ունեցած են տեսնելու, ճամբաներուն երկայնքը յաճող թաւ դնոցած սեղաներ, կամ որոնք լսած են բնիկ վաճառորդի մը դաջը. — «Բայմաք Եօղուր» :

Պ. Վերքթառ Պէրառ, որ կը վերաբերի պատահական արեւելագէտներու այս երկրորդ դատարարին, — հակառակ բաւական երկարատեւ իր մէկ բնակութեանը հոս՝ ինչպէս ենթադրել կուտան մակերեւութաֆոնութիւնը իր տեղեկութիւններուն, — ասկէ առաջ՝ Ռիլլի սը Բառիի մէջ հրատարակած է թուրք լեզուին վրայ յօդուած մը, ուր ծայրէ ծայր կը շարակարգէ իր արեւելագիտական ընդարձակ տեղեկութիւնները: Այս ինքնահռչակ լեզուաբան հրապարակագիրը կը կարծէ թէ «արմատներու յետադատ եւ նախադատ միախառն մասնիկներու» սրտնցմով կազմուած է թուրքերէն լեզուն՝ օրստօրէական յաւելումը, ունի չորուքեան, խրքնուքեան, միօրինակութեան դրոշմ մը, բայց միւսեայն ասոն դրահաշուական ճշգրտութիւն մը»: Նոյն երկ աշտիական կոչութիւնը թուրք լեզուական համաձայնութեան, կ'աւելցնէ որ քիթ-քիթի կը կցէ բառերը առանց եւրոպական տառաւորութեան յետին մտանդութեան, եւ որ, անխմանալի ու քաշքշաւ երկարածիգ նախադասութիւններու պոչի մը կապուած՝ կը փճայնէ Բանը՝ այն փարօսը՝ որմէ կը ցայտէ ընդհանուր իմաստը եւ որմէ կախում ունի:

«Իր ալֆաբ բառարանով և մեքենական համաձայնութիւնով՝ թուրքերէնը աղէկ ըրած է փոխառութիւններ ընելով Արաբերէնէն, Պարսկերէնէն, Յունարեկէն և Հայերեկէն որդեգրելով Եւրոպայի եւ Ասիոյ մէջ ինը տասներորդը այն բառերուն՝ զորն կը գործածէ այսօր, ինչպէս արաբերէն այբուբէնը եւ նաւաստանութիւնը եւ արաբեւագրական բանաստեղծականութիւնը. ան նախնական բաւամբերով լեզու մըն է և չկրնար արայայել բուն դարձուածները խօսակցութեան, նաւաստանութեան եւ բանաստեղծութեան»:

Շնորհքով հանգէսի մը մէջ հրատարակուած այս ինքնահռչակ ուսումնասիրութեան ընթերցումը մեծ տարակոյս ներշնչած ըլլալով մեզ հմտութեան խորութեանը վրայ իր հեղինակին, որ մեր լեզուաբանութեան ամէնէն տարրական ծանօթութիւններուն անգիտակ է, ստիպուած կը զգանք ինքզինքնիս՝ հերքել իր գաղափարները՝ սխալով այբուբենէն:

Թուրքական լեզուն, որմէ ծագում առած է թուրք աղգաբարբառը, նախապէս կը գործածէր չուտական (tchoudighe) և ունական (runiforme) կոչուած գիր մը, — զոր Ռապոֆ իր աշխատութիւններով կ'ապացուցանէ թէ թուրքերէն է, — եւ մասնաւոր այբուբեն մը, որ կը գրուէր վերէն վար սեղգութիւնով: Վամդէրիի կարծիքով, նուաորեան միախմտները արեւելեան թուրքերուն բերին սուրիական նոր այբուբեն մը, որ երէք դար չանցած, անշու տեղը սիլիգական (seythique) հին գրութեան: «Ուսուցում» կոչուած առակը՝ որոնք գործածուած են գրելու «Քուտաքթու Պիլիք»ը՝ ուրիշ առակը չեն՝ բայց եթէ՝ սուրիական:

ՖԻՍԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԳԷՄՔԵՐ

ԱՏՈԼՖ ՌԻՊՕ

Մբրիկէն, փոթորիկէն, ահարկու հոսանքներով լծնող անձրևներէն ետքը՝ որոնք դաշտերու բուսականութիւնը, անհատաւոր ընտելացրերը կը խաթարեն, ամայի հովիտի մը, լքուած դաշտի մը անկիւնը, բլուրի մը վրան կը նշմարուին վայրեր, տակաւին հմայիչ, ժպտուն։ Այդ կինսաւէտ թարմութիւնները կը մղմնն ամայութիւններուն ստիպած սաւթանքի ազատարութիւնները։

Ատոյ՛Ֆ Ռիպո՛՝ ներկայ ժամանակներու սերունդները ազատող անհամար մտային յուզումներէն, փոթորիկէն գերծ, հոգեկան նուրբ, մանուած ծապաւոր խուզարկութիւններէ զգոյշ, զրկեթէ չնչաւարտ կեանքին նոր պայմաններ որոնելու ակտէն ա վաքակ Զուլյերիայի անհման վիպող մը, մաքուր իր երկրին լիճերուն բիւրեղային թափանցիկութիւնը ունեցող հոգի մըն է։ Իր գրական արտագրութիւններով Ռիպո կը ներկայանայ, պարզ, վերջին ծայր լաւատես, մաքուր զգայնութիւններով օժտուած։ Եւրոպեան արդի գրականութեան մէջ հազուադիւրս են գրողներ, թերեւ իրեն նման հաւատք ունեցող, վստահ մարդուն երջանկութեան, անոր բարոյական ուժին, անոր անձնութեան, զոնգութեան անհուն չափին։ Յոռեւտութիւնը արդի գրականութեան յատկանիւնն է։

Ի՞նչ է և ի՞նչ կը ներկայացնէ սակայն ժժՖ. դարու երկրորդ կէսէն վերջը սկսող և քսաներորդ դարու սեմին վրայ շարունակուող համաշխարհիկ գրականութիւնը, մասնաւորաբար ֆրանսականը՝ եթէ ոչ խառնակոյտ մը հիւսնայի, ապշեցնող զննութիւններու, խորունկ դատողութիւններու, մարդկային հոգիին, անոր զգացումներուն, ներքին և արտաքին կեանքին վրայ, և ձգտում մը աւելի իրապաշտութեամբ՝ որ տակաւ կը համնի իր վերջին սահմաններուն։

Ռամանթիգմի փայլոյցով, խեղալ, մաքուր շրջանէն ետքը՝ գրողներուն միտքը կը հակի խորունկ վերլուծութեանը էակներուն, և ահա վէպը կը դառնայ վերլուծական, գննական գիտութիւն մը՝ որ կը քննէ մանրակրկիտ՝ խորհող տարրին, էակին բնուէները, ուղեղին գործունէութիւնը, ստորիճանական զարգացումը՝ զանազան աղմուային, անորոշ վիճակներու։

Պաշտօնը անողորքելի երանգներով ցոյց կուտայ մարդուն մէջ ինչ որ կայ իբր կեղծիք, անտալի հպարտութիւն, մեծամիտ սեպմտութիւն, փառասիրութիւն, ազահութիւն։

Յիւսիքս իրապաշտութիւն մը կը ծնի կամ մատուցի կը շարունակէ հսկայ վարպետութիւնով, և կ'ուսումնասիրէ կինը ինչպէս որ ան կը ներկայանայ արդի ընկերութեան իր իրական վիճակին մէջ, և ո՛չ ինչ-

պէս որ զայն ներկայացուցած էին մեծագոյն մասով դատականներէն շատեր և «ռօմանթիք» դպրոցի հանճարները: Մատամ Պօվառին չէ՞ ճշգրիտ արարը այն հանդիսաւոր անկումներուն՝ որոնց տարիներուն թաղարին մէջ, կ'ենթարկուին անհամար երազատինչ կ'ինէր, անդգաւ լաբար, բնականօրէն: Ինչ որ կը սկսի Ֆլօպէս՝ կը շարունակեն Կոնքուռները, աւելի նաւրբ, աւելի խոր և ոչ գութնիկ զննութիւններով: Սակայն անքնական է, թերեւ, այն ցաւին հաճոյքը զոր անոնք դրած են ժԹ. դարուն մէջ ապրող աղջկան մը բերնին մէջ. մեր դարուն մէջ ապրող աղջկան մը բերնէ: արտաբերուելով էր որ ան աւելի բնական պիտի ըլլար, և ինչ է նոյն ցաւին հաճոյքը, եթէ ոչ բարոյապէս անանկայած, անհաւատ, իյնող արդի սերունդին, հոգեկան վիճակներուն յուսաւոր արտայայտութիւնը:

Զոյա աներեւակայելի գիտողութիւնով մը Ռուկոն Մաքսոնիւրու շարքը կը հրատարակէ և ինչ որ կը ներկայացնէ արտաքին զննական կարողութիւններով, խողովութիւնն է, իրողութիւնը իր մերկ, իրավուն, անքննադատելի վիճակին մէջ. շատեր կը գարչին իր գրականութենէն: Դժոխային կեանքի նկարներ տան Զոյա:

Պուսթէ գիտութեան սահմանները կը թեւակոխէ իր փնտռանքներուն յազուրդ առնու համար: André Cornélisը վէ՞պ է թէ հոգեբանութեան գիրք մը: Դեռ կարելի է անհուն շարք մը գանել ներկայ բոլոր այս կարգի գրողներէն:

ԺԹ. դարուն առաջին կէսէն ետքը՝ «ռօմանթիք» բանաստեղծութիւնը՝ Պառնասեաններուն յուսական գեղեցիկ հովիտներուն զերիւսովը խմբուած, ներշնչուած, ներդաշնակ չափին սեղի կուտայ: Քիչ մը կը ծագի ուրոյն դպրոցը անկապաշտներուն՝ որոնք իրենց քնարովը խռոված վերջապոյ մը կը շեշտեն: Վէպէն ինքզինքը, իր հոգին, իր ցաւերը, անկումները կ'երգէ իր անմահ, ապականած հոգիէն՝ մաքուր շեշտեր կ'ելլան, կարողի երգերը թերեւ իյնող բանաստեղծութեան:

Ռօլինա՝ մարդուն կեղծիքէն, սուտ հաւատքէն, անհամարքը ընկերութենէ մը յուսահատ՝ գեղջկական հրապոյրները կ'երգէ և անձնապահ կ'ըլլայ:

Որքան յուսաւորութիւն գիտութեան դարուն:

Միւս արուեստներուն մէջ ալ գեպի է կնճառող դպրոցներ վերլուծելու և զանոնք արձանի մը, նկարի մը, երաժշտական կտորի մը մէջ սեղմեցնելու ճիգը:

Արդի ֆրանսական և համաշխարհիկ դրամատիկան և արուեստներու այս ձեւը բնական է՝ երբ նկատի առնենք ալ ի մարդկային ընկերութեան պայմանները:

Յուսաւորութիւնը հիմա ամէն ժամանակէ աւելի արեւմ է սիրտերու:

Ապա թէ ոչ ինչպէս Իպոէն և դեռ անհամար գրողներ լատգոյն կերպով կազմակերպուած ընկերութիւն մը կ'երազեն:

Ռիպօ յոսեփաներու այդ հսկայ խումբին չի պատկանիր. իր գրական նութենէն կը ծորին յոյսի, երջանկութեան աղբիւրներ: Իր վիպակները բայտաբի յատկութիւնը ունին ըլլալու պարզ, անուշ զուարթութեան մը հասանքով առգորուած: Անձնուէր, սուրբ, անկնձիւ, անձնագոհ հոգիներ են բոլոր հերոսները Ռիպօի:

Կեանքի դժբաղդութիւններէն, կանխաճառ մահերու առթած անսիրտի կսկիծէն անհաւատ հոգի մը կը փրկուի՝ փոքրիկ աղջկան մը՝ Ռոզինի սրտայայտ անձնութեան չնորհիւ, և Իսահակ անհաւատ ծերունին, մենակեաց մարդը, փրկուած իր տարակոյցներէն՝ փոքրիկ աղջկան ձեռքէն բռնած կ'ազդուի եկեղեցի, Ծնունդի առտուն (Rose sans Epines):

Սիլվիօի վերադարձին մէջ գիւղացի աղջիկ մըն է որ՝ նշանաւոր նկարիչին Սիլվիօի հանդէպ իր ունեցած սէրը կը մոռնայ կամովին, երբ կը տեսնէ թէ Սիլվիօ կը սիրէ իր արժանիքը գնահատող գերազանցապէս զարգացած անգլուհի մը և կ'երթայ կոյսերու վանքի մը գոթ զտտերուն ետեւը թերեւս լաւա:

Jeanne Aux Bluets-ի մէջ տարբեր միջավայրի մէջ ալազան ձեւորով կը կրկնուի դարձեալ նոյն անձնութեանը:

Une Collaboration-ի մէջ՝ հարուստ, բարի, տաղանդաւոր երիտասարդն է՝ որ իր ճակատագիրը կը մշտցնէ ազնուական և սակայն անժառանգ արուեստագիտուհիի մը հետ:

Հանդիսաւոր Պասարազին մէջ՝ սէրը կը ծածկուի և արուեստի բարձրութեան նպատակու կը ծառայէ:

Ռիպօ կը գծէ այն տեսակ հոգիներ՝ որոնց խռովքը չունի գեւեղիկ ստորնութիւններ, յուսահատ հակումներ: Իր վիպակներուն մէջ՝ ամէն բան լաւագոյն, բարեպաշտ, սրտազնոյիչ հանդրուան մը ունի:

Ո՞վ կրնայ երեւակայիլ սիրող մը՝ որ իր ամէնէն անտոյգ վայրկեաններուն՝ երջանկութեան ծաղկումը կը զգայ, Շառլ Տիւվուազէն կ'ըսէ ինքնիրեն. «Խնդդէս կը սիրեմ զինքը, ինքն ալ զիս կը սիրէ միեւնոյն սիրով որ չպիտի փոխուի: Կեանքը որքան անուշ է. Աստուած իմ»:

Աստուծոյ Ռիպօի տիպարներէն ո՛չ մէկը իր սիրոյն մէջ ունի անհարազատ կատարներ, նախանձ, գահալէժ միտումներ:

Շառլ Տիւվուազէն (Jeanne Aux Bluets) յաճախ տենդոտ ակնարկները կը զսպէ և սիրոյ յայտնութիւնը կը յետաձգէ:

«Պիտի խօսիմ աւելի ետքը, ժամանակ ունիմ, կը մտածէր: Ո՛րքան լաւ է այսպէս զինքը սիրել հեռուէն, առանց նոյն իսկ որ ինքը կ'աւկածի»: Բայց թեպէտ կեանքն է որ հաճելի է՝ այդ վիպակներուն մէջ, քաղաքին ժխտէն հեռու, հեռու աշխատանոցներու անդադրում ձայներէն, ճաշումներէն, զլուելի բուրումներէն ծուխերուն՝ որոնք երկինքի կապոյտ տարակուսելի կ'ընեն:

Փոքրիկ աւան մըն է Երբեմն, հանդարտ, ուր կ'ապրին իր վէպերուն

անձերը, շատ անգամ դիւզերու մէջ, Զուլցերական սրայծառ, յստակ երկինքին տակ, ուր ձորերը, զառիվերները ծաղկաւէտ են միշտ, արահեանները բուրումներով խնկաւէտուած, այգիները յուռթի, ցորենի դաշտերը լեցուած ոսկեգոյն, անասուգօրէն ծածանող հասկերով, որոնց մէջ գոհ կ'աշխատին, անարտունջ գեղջուկներ, արեւին պսակունդութեանը տակ:

Բնութիւնը ներդաշնակ, երջանիկ միաւորում մը ունի Ռիպօի նկարած անձերուն հետ և միանդամայն երանելի, կենալի, փառքուն չըջանակ մը: Լիճերը կը զմրուխտանան, կը վարդանան, շափիւղայի երանգներ կ'առնեն, կը սառեւորտին սակաւ հրապուրիչ մթութիւններով իրիկնամուտին լոյսերէն: Երկինքը կ'անդրադառնայ շուրերուն մէջ: Սարսափող, անոյշ, մեղմ երգ մը հովիտներէն կը բարձրանայ. Angélusը չունի տխրաբոյր շեշտ մը: Ինչ լաւ է և ըզձալի այն կեանքը զոր կ'ապրին այդ գեղջուկները և անիկա որքան անարտունջ կ'անցնի հոն, ուր սիրող հողին փոխանակ հառաչելու՝ կը ժպտի. «Եւ Շառլ կ'ուզէ երգել իր երջանութիւնը այն միլիօնաւոր լուսաւորներուն՝ որոնք կը փայլէին միջոցին մէջ»:

Ռիպօի գրականութեան մէջ տղեկ նկարագիրներ հաղուադլւտ են: Միայն Սիլվիօի Վերապարձին մէջ տձև մարմինով անշնորհ աղջիկ մը Հինայի անուն գեղջուկ աղջկան զգացնել կ'ուզէ ծաղրող շեշտերով Սիլվիօի սիրոյն օտարանալը և վայրկեան մը վերջը կը կորուսի: Ասիկա սակայն կը ծառայէ շեշտելու, աւելի զգալի ընելու Նինայի նկարագիրին մաքրութիւնը, անձնագոհութեան մեծութիւնը:

Յուսակաւութիւնը, ասուր զգացումները, վրդովող գուշակութիւնները, վարանումի առթած ցաւերը խեղդուած են Ռիպօի վիպականերուն անհուն քրիստոնէական պարզ սիրոյն մէջ:

Missa Solemnis-ի այդ պզտիկ գլուխ-գործոյն մէջ՝ յանկարծ յայտնութիւն մը կ'ըլլայ սակայն դիտողին, նետուած դառն հեղնանք մը՝ որ զգացնել կուտայ թէ դառնութիւններ երբեմն կ'արթնան հեղինակին լաւատեսութեանը մէջ:

Աղինւ նպատակ մը կը հետապնդէ Ռիպօ, թերեւ մարդասէր մըն է և կ'ուզէ անանկ մարդիկը ա'յնպէս ինչպէս որ ինք կ'երազէ դանոնք. կամ սփոփանք մը ըլլալ կ'ուզէ խոցոտ հոգիներու իր մեղմ կեանքի պատկերներովը. և այդ մտածումով է որ իր վիպականերուն մէջ մթնոլորտը անհուն պայծառութիւններ, բուրումնաւոր տաքութիւններ ունի և յաւէտ անամպ է ու դարունը մշտապէս: «Ռոմանթիք» սէրերու, — սէրեր որոնք պզտոնական ըլլալու կը միայն, — անձնութիւններու վերադարձ մը կայ Jeanne Aux Bluets-ին, Սիլվիօի Վերապարձին, Une Collaboration-ի մէջ: Որքան առնն որ ընթերցողը թափառի իր գրականութեան մէջ՝ անջատուած կը զգայ ինքզինքը միջավայրէն և երանաւէտ կեանքի մը մէջ կը թափառի:

Բայց այդ ընթերցումէն, լաւատես էջերու, լաւասոր, պայծառ, անթերի պատկերներու տեսիլքէն ետքը, տխրութիւնը կ'իջնայ մարդուն մէջ ակամայ, որովհետեւ անդգալաբար կը խորհի թէ՛ ի՞նչ որ Ռիւֆո ուզած է իբր ընդհանուր վիճակ մը ցոյց տալ՝ հաշուադիւտ հոգիներու միայն յատուկ է և աւանդ, արեւատ, ժպտադէմ, պերճ ցորեկներու կը յաջորեն մրրկինքը, ձիւնը, որ հովին ուժգնութենէն կը խռովի, հոսսնուտ անձրեւները, ցուրտը. ու քանի մը անձնուէր, երջանիկ, բարի, ներդաշնակ հոգիներու քով կան տաղութեամբ լեցուն, ստութեան կեանքով պարտ, մութ, դժբաղդ, արտասուող կեանքեր:

Կ'ըսուի թէ մարդը հետզհետէ կատարելութեան, հետեւաբար երջանկութեան կը ձգտի և դիտական ամէն պրոպոզից, գիւտ, գրական լաւատես կեանքի պատկեր, օգտակար դրութիւններ աշխարհի երջանկութեան կը ծառայեն: Բայց՝ սա միայն ճշմարիտ է որ մարդկութեան մտածումները, դործունէութիւնը, խորհուրդները կը կնճռոտին և այսօրուան մարդկութեան մեծագոյն մասը նոյնքան ապերջանիկ է և տխուր որքան դարեր առաջ ապրող էակներ: Եթէ իղձերը՝ բարօրութեան ծնող միջոցներուն հետ չբաղմտապատկուէին, այն ատեն թերեւ կարելի ըլլար մտածել մարդուն երջանկութեան վրայ: Միտքը սանձարձակ կ'արշաւէ և երեւակայութիւնը տաղակացած նոր միջոյններ կ'որոնէ հրճուանքի, հանգստութեան, վայելքի: Ատիկէ կը ծնի ապերջանկութիւնը մարդուն: Մտածումը, իղձը, նորանոր հրաշալիքներու փափաքը մարդը՝ յառաջդիմութիւնը արգելել պիտի ըլլար և ատիկա անկարելի է: Այս է թերեւ բնական վիճակը մարդուն և ամէն բան բարեշրջութեան պէտք է ձգել որ թէև դանդաղ սակայն հաստատօրէն կ'ընթանայ:

Ատուֆ Ռիւֆո, մեր մէջ բոլորովին անձանթի այս գրադէտը՝ կը ձգտի մարդը երջանկութեան ուղիին մէջ առաջնորդելու, ուղեւոր արթնցնել անոր մէջ պարզ կեանքի, մաքուր հաճոյքներու սէրը, եթէ չի յաջողի, սակայն կը սփռի շատեր ու հեշտ մոռացումի մատնել կուտայ ընթերցողները: Այդ մոռացումը՝ հիւանդ հոգիներու համար բժշկութիւն մը, բարերարութիւն մըն է:

Շէկ անձայրածիր անապատին մէջ կեանքի ուսմաններ են իր վէպերը, կղզիներ մարդկութեան մտածումին անստիճան տարածութեան մէջ, որոնք յոգնաբեկ, դառնացած ճամբորդին մէջ կ'արթնցնեն կեանքի ցոյսեր, յոյզեր և կը մեղմացնեն, նուազ տաժանելի կ'ընեն դեռ չարուհեակելի ճամբաներու անստուգութիւնը:

Պ Է Թ Ա

Հինգ հազի էին, հինգ տխուր ու ողորմուկ մութայիլներ, ամէն իրիկուն կու գային կը միանային նաւամատոյցին լաշորսիքը ուր թշուառութեան կատարեալ խմբանդրի մը կը ձեւացնէին մութին առաջին հեւքերէն գոյացած նայ ու ցօլադնիչ ողորմներուն մէջ:

Անոնց ցաւառանջ ու վախ մարմնը հազիւ թէ կը քօլարկուէր ցնցոտիներու անձանայ կոյտով մը՝ որուն անհամար պատուածքներէն՝ անպատկառ ու պճրթկուն մերկութեան մը պատանները գուրս կ'ընտանին մշտաբայ աչքերու պէս: Գրգռեցիները ինքնին աւելորդ զարգարանք մը դարձած էին այդ մերկութեան վրայ, որովհետեւ փոշին արդէն իսկ դայն հաղուեցուցած էր թանձր ու գորշունակ խառով մը, որուն տակ մօրթին նախնական գոյնը ծածկուած էր ամբողջովին, տարաւ ու անորոշ կը մնար, ինչպէս ազտոտ աղակիլի մը ետեւէն նշմարուած դէմքի մը երանգները:

Ձմեռը՝ զանաւոր չէինք տեսներ, բայց հազիւ անձրեւները դադրած՝ անոնք կուգային իրար կը գտնէին նաւամատոյցին շուրջը՝ երբ գարնան աւետարէր ծիծեռնակները իրենց լոյսները կը շինէին շաղակրատ ու մըշտակայ գործունէութեամբ մը: Անոնց ճակատագիրը տարբերութիւն չունէր: Աշխատութեան ու տաժանքի միեւնոյն անողորդ գառաքնիքը զանոնք կը խոյէր անկարելի խթանի մը պէս. լուծը անբաժան կը մնար անոնց վրէն: Գոյութեան պայքարը այնքան հարկեցուցիչ եւ անխուստիելի էր ծիծեռնակներուն՝ որքան այս մութայիլներուն համար: Մէկն ու միւսը իրենց կերը կը ճարէին ուրիշ՝ որ գտնէին, շատ անգամ ալ կը գողնային, եւ ուրախութեան միեւնոյն հրճուագին ու ուրտասնդիչ կանչը կը սրտթկար իրենց կուրծքէն՝ երբ ձեռք անցում պարէնի մը տեսիւրը կը տալէին:

* * *

Ուրիշ եկած էին այդ աղաքը: Թերեւս իրենց իսկ անձանօթ էր այն մեկնակէտը ուրիշ ճամբայ հանուած էին: Անոնցմէ իւրաքանչիւրը մարմնացումն էր ցաւագին ու սրտամարմնք ողբերգութեան մը՝ կազմուած անանուն լքումներով դառնութեամբ ու վիշտերով, որոնք անհունապէս աւելի պերճախօս կը դառնային իրենց զարհուրելի համբութեան մէջ: Տարակոյս չկար որ փողոց նետուած էին անայդ մնալու դատապարտուած յոյսի վերջալոյսի մը պահուն, անբաժնի պոռուկներ անխոստովանելի կիրքերու, լքուած հազար և աւելի արցունքներով՝ երբ իրենց ծնունդ տուող զժառնգիկները մայրութեան զգացումէն ա'լ աւելի զօրաւոր ու աններող նկատումներու բաղխած և յաղթահարուած էին:

Տարօրինակ ճակատագիր՝ որ գերազայն հրճուանքի, սիրոյ ու

առւիտանքի վայրկեանի մը պտուղները այդպէս դժբաղդութեան որդեգիրներ դարձուցած էր, զանոնք յանձնելով թշուառութեան հասանքի մը, որ ո՛վ գիտէ քանի՛ խուժեղութեամբ, քանի՛ քարերու զարնելէ վերջ՝ քշած բերած էր մինչեւ այդ նաւամատոյցը, ուր բաց օդին կը պտուկէին, իրարու քով սեղմուած, գրեթէ մէկ զանգուած կազմած։ Ողբալի՛ բան էր այլաձեւ ու բազմազան մարմիններու ադէկոյտը, այնքան նման հրկիւղուած տան մը մոխիրներուն տակէն հանուած գուղձերուն։

Հինգն ալ միեւնոյն նաւաբեկութեաւ։ Ելեակներն էին, հինգն ալ չարքաշ ու տակաւին մանկատի։ Միայն կանխահոս գիտակցութիւն մըն էր որ զանոնք տարէց ցոյց կուտար, և հակառակ աղաի ու ցեցի այն քօղին՝ որ այդ սորսորած դէմքերը կը մթաղէր, կեանքի արշալոյսին ցոլքը կրկին կը թրթուար անոնց աչուքներուն մէջ, իր հրաշագեղ ճաճանչներուն բովանդակ առուգութեամբ։

* * *

Այդ ցաւի դաւկըներուն ամբողջ կեանքը, ամբողջ աշխատութիւնը միակ ձեւքի մը յանձնուած դեկ մը կը վարէր։ Եթէ Պէթան չըլլար՝ անոնք պիտի չուարէին, պիտի մոլորէին, և անկամ ու չմօր խաղալիքներ պիտի դառնային կեանքի յորձանուտ ալիքներուն մէջ, ճիշդ արձակ ծովուն արհաւիրքներուն դէմ առանց նաւապետի մոտցած նաւերու պէս։

Պէթան ամէն լսան էր անոնց համար, դերազանց օրինակ կամակոր ու յամառ աշխատութեան որ երբեք դեղեկիլ չէր գիտեր, եւ միւսները անոր վրայ կը ձեւէին իրենց կեանքին ուղեգիծը, իրենց ընթացքն ու ցանկութիւնները։ Անիկա ամէնէն պղտիկն էր տարիքով. մէկ ողջ աչք միայն ունէր, զրկուած էր սաքերէն ու ձախ թեւէն՝ զորս վայրադ հայր մը կարած էր երբեմն՝ բեռ ըլլալու սահմանուած այդ մանուկը մուրացկանութեան դրամադուլի մը դարձնելու համար։ Բայց անիկա իր մէկ հատիկ թեւով աւելի կենսալիք ու ճկուն չարքաշութիւն մը ցոյց կուտար. քան իր միւս չորս բաղդակիցները որոնք պակաս ոչինչ ունէին։ Ակնդէտ կը սարսէր նաւամատոյցին առջեւ, եւ ամէն անգամ որ շողեւնաւ կը մօտենար, մոլէսի մը արագաշարժութեամբ կը սողոսկէր բազմութեան մէջէն, մէկուն ոտքին կը կառչէր, ուրիշի մը փէշը կը քաշէր, բաց բերնով մը որ դանձաճակի ձեղքի մը պէս կախ կը մնար մարդոց առջեւ։ Անձայն՝ անշուշտ մուրացկանութիւն մըն էր իրենը, ոչ իսկ ազերա մը կ'ուղղէր, որովհետեւ կը հասկնար թէ բոլոր գլխութեան կոչերը, բոլոր պաղտոտանքի աղաղակները չպիտի կրնային երբեք դերազանցել իր խղճալի կերպարանքին ողբազին ու բարձրագոյն պերճախօսութիւնը։

Արշալոյսէն սկսեալ մինչեւ վերջին շողեւնաւը՝ այդ սողունի գետ-

նաքարչ կեանքը կ'ապրէր, եւ ասիկա՝ ամէն օր անխոնջ ու տենդազին աւելնալ մը։ Միւսները երբեմն իր քով կը մնային, երբեմն մինչեւ հեռաւոր թաղեր կ'երթային, միշտ բաց ձեռքով, միշտ աղաչաւոր ու արգահատելի զէմքով մը, եւ երբ մութը իջնէր, կու գային Պէթան կը գտնէին եւ անոր կը յանձնէին օրուան վատտակը։ Եւ այդ անկար ու ակեղծ արարածը այն աստիճան զարհուրելի աշդեցութիւն մը ունէր որ ոչ ոք կը համարձակէր իր հաւաքած ողորմութիւններէն հոգ չէ թէ պղտիկ մաս մը ծածկել անկէ։

Պէթա ոչինչ կրնար ընել իր'նոց. իր ծմբաբարձ ու ձեռնառ լիճակին մէջ՝ ոչ իսկ ինքզինքը կրնար պաշտպանել. բայց միւս չորսը կրկին կը ստակային իրմէ, և ինչ որ հրամայէր իրենց՝ վայրկեանապէս կը գործադրէին։

Չարմանալի բան էր այս հլու համակերպութիւնը։ Երեք տարի մը կար որ Պէթայի մօտ էին, և անոր աշդեցութիւնը միշտ աւելի զօրացած էր, առանց նոյն իսկ ամենաթեթեւ ընդվզում մը տեսնելու։

Ինչպէ՞ս գոյացած էր այդ աշդեցութիւնը։ Իբր ամբողջ առաւելութիւն՝ Պէթա միայն իր ապշեցուցիչ դիւրաշարժութիւնը ունէր, և այդ յատկութիւնը իսկապէս հրաշալւան հանդամանք մը կը ստանար իր քով։ Ազանակարար սովորական մարդոց խմբով չէր թրծուած. անըմբռնելի ու գերբնական բան մը պէտք է ունենար՝ այդպէս առանց սոքի ու միակ ձեռքով մը՝ սուրացող օձէն աւելի արագամէտ ըլլալու համար։ Այդպէս մտածած էին նաեւ իր չորս արբանեակները. այսպէսով՝ գերազանց ու պաշակի էակի մը նշանակութիւնը ստացած էր անոնց աչքին, գրաւած էր անոնց էութիւնը և զանոնք կորացուցած էր իր կամքին առջեւ։ Անոնց ամէնքն ալ անզարգ ու մանուկ հասակի մէջ փողոց ձգուած սղաք էին. գաղափար չունէին ոչ երկնային, ոչ ալ աշխարհային իրեւ ու մասին. Աստուծոյ անունն իսկ անծանօթ էր անոնց։ Բայց հաւատք մը անդառնառ պէտք է մարդկային հոգեոյն. ան չի կրնար մեկնել իր շուրջը ալեծփող խորհուրդը, և ահա գերազոյն ձեռքի մը, գերազոյն կարողութեան մը գաղափարը կը ծագի մաքին մէջ, կը բացուի ու կը տարածուի գիւթի չողքով մը՝ ինչպէս սիրամարգի մը խայտաբղետ ու գրաւիչ տոտնը։ Ան կա'մ զինքը չըջապատող արաւածնեւուն վրայ կը կեդրոնացնէ այդ գերազանցութեան գաղափարը, կա'մ անշունչ իրերու, բնական երեւոյթներու, և կամ աւելի վերացիկ ու գաղափարային էակներու վրայ, և զանոնք տէր կը կարգէ իր ճակատագրին։ Եւ ճակատագրի գերութիւնը միակ լուծն է զոր մարդիկ սիրով տարած են միշտ։

Այդպէս եղած էր նաեւ այս չորս մուրացիկներուն համար. անոնք իրենց ճակատագիրը Պէթայի մատուցած էին, զայն կը պաշտէին իբր

անսովոր, իբր անզուգական երևոյթ մը, որովհետեւ ճշմարտապէս կը գրաւէր ու կը յանկուցանէր իրենց անպատուաստ ու անխորձ միտքը :

* * *

Օր մը՝ հազիւ տասներջորսը գրկած մութացիկ մը ինկաւ այդ կողմերը : Նորեկը սէգ ու կորովի պատանի մըն էր, յանձնապատասխան ու խիզախ ծնունդ հսկայ առիւանքի մը, որուն տաղերուն արձագանգը թերեւս լեռները երգած էին : Հպարտութեան շանթեր կը բեկբեկէին իր դիւային աչուքներուն մէջ, և ալուսը էր լուսնագեղ այջկան մը պէս :

Պէթա՝ սիրաւէտ ընդունելութիւն մը ըրաւ անոր : Այդ յայտնութիւնը չէր խափած զինքը, որովհետեւ ինքն իսկ մեծ հաւատք ունէր իր վրայ : Այն մշտակայ խնկանքը որով զինքը շրջապատած էին իր չորս արբանեակները, ամբարձաճիւ ինքնավստահութիւն մը ծնցուցած էր իր մէջ : Բնդհակառակը՝ տեսակ մը հրճումնաբոյ հիւրընկալեց զայն, որովհետեւ անանկ կը մտածէր թէ ան ալ հլու արբանեակ մը պիտի դառնայ իր շուրջը՝ ինչպէս եղած էին միւսները, միշտ պատրաստ իր քմահաճոյքներուն առջեւ կորսնալու :

Այն իրիկունը՝ ճշմարիտ խրախճանք մը կար նաւամատոցին բլորտիքը : Ի պատիւ նորեկին՝ Պէթա դրամով ուտելիք գնել տուած էր, և երկար ժամանակէ ի վեր առաջին անգամը ըլլալով՝ դռնէ դուռ հաւաքուած հացերը ամբողջովին չուներուն նետած էին : Խնջոյքէն վերջ, — որովհետեւ այդ ուղորմուկ ճաշը ճշմարիտ խնջոյք մըն էր մութացիներու համար, — անոնք խաղի ու սրբի ինկան, և մինչեւ կէս գիշեր՝ շատ փողոցային երգերու զիլ խաղերը մեր քունը օրօրեցին :

Յաջորդ իրիկունը ստիպեց նաւամատոցը լուռ մնայ. անսովոր բան էր որ մութին առաջին ծալքերուն հետ այդպէս քունի իյնային : Առտուն՝ խնդիրը պարզուեցաւ : Պէթա դժգոհ էր ու կը մռնչէր, և իր չորս նախկին բաղդակիւնները կը սրտիային աղիուն ծիւերու պէս, ինչպէս առաջին մարդիկը՝ դողացած էին կայծակնածին որոտումներու տհաքիւ առաջներուն հանդէպ : Նորեկը միայն անխափ մնացած էր, միշտ սէգ՝ յանձնապատասխան ու հպարտ, և շատ խորատեսութեան պէտք չկար՝ հասկնալու համար թէ ան էր Պէթայի դժգոհութեան պատճառը : Առջի իրիկունը՝ նաւամատոց վերադարձին՝ Պէթա օրուան վատտակը պահանջած էր անկէ, բայց նորեկը չէր տուած՝ մէջտեղ գնելով աշխատութեան իրաւունքի տեսակէտ մը որ զարմանքի մասնած էր զայն :

— Ինչ որ շահած եմ՝ ի՞նչ է, իմ աշխատութեանս, իմ քրտինքիս պտուղն է, ըսած էր այն վատահ ու անդրդուելի շեշտով՝ զոր իրաւունքը կուտայ մարդկային բարբառին :

Եւ Պէթայի հետ զարմացած էին նաեւ միւսները, ո՛չ այնքան այդ թերեւս անդրադարձից խօսքին խորութիւնը ըմբռնելուն, որքան Պէթայի

կամքին դէմ կատարուած ընդվզումին համար: Կարելի՞ էր անոր մէկ խօսքը երկուք ընել տալ: Անոնք անաշուկ կը հաւատային թէ չա՛տ անագայրոյն ու անողորմ կերպով մը պիտի պատժուի այդ յանդուգն ու հպարտ աղան՝ որ երկու երեք տարիէ ի վեր Պէթայի կողմէ հաստատուած իրերու կարգը շրջափոխելու յաւակնութեամբ ուռած էր: Բայց զուր տեղը սպասեցին: Նորեկը ոչ միայն չէր պատժուեր, այլ նոյն իսկ աւելի առաջ կը տանէր իր յանդուծութիւնը, կը ծաղրէր Պէթան, անտաշնելի կատակներով կը սրնմեցնէր զայն, և միշտ առիթ մը կը ստեղծէր անոր սրանեղութիւնը գրգռելու համար:

Անոնց կողմ ու անմտած հաւատքին արուած առաջին հարուածը եղաւ տախկա: Ընդդէմ բացուած էր այդ հաւատքին թումբին վրայ, տարակցար բայ իրամ մը գտած էր իր առջեւ ու կը տարածուէր անարգել: Որովհետեւ հաւատքները անաստան չեն. անոնք միշտ տեղի կուտան ուրիշ աւելի զօրաւոր և յանկուցիչ հաւատքներու: Այդ անժառանգ տղոց հաւատքն ալ տակաւ կը խուսէր Պէթայի վրայէն, ու միւսին վրայ կը թառէր:

* * *

Մինչեւ այն ատեն՝ Պէթա չէր զգացած թէ երկու ոտք ու ձեռք մը ունի պակաս, որովհետեւ անոնց պէտք չէր ունեցած: Հի՛մայ միայն, նորեկին յայտնութենէն վերջ, կը հասկնար թէ որքա՛ն անդօր է, որքա՛ն ախեղձ ու ողորմելի: Անսահման իղձ մը կ'ուռեցէր իր թոճկած ու ցաւահար կուրծքը, կ'ուզէր իր հակառակորդին վրայ խոյանալ, անոր վզին պլուլել և զայն բռնել ախոսներովը: Բայց ի՛նչ օգուտ որ չէր կրնար, և կատաղութենէն կ'ոռնար ու կը հայհոյէր:

Օրերը կ'անցնէին, ու Պէթայի կատաղութիւնը աւելի կը բորբոքէր. սիրտը հնոց մը դարձած էր, իր կուրծքը կ'ուտէր. Եւ հայհոյութիւնները միշտ աւելի՛ դարհուրելի կը դառնային: Իր վայրագ աչուճներուն մէջ ասեղութեան ամբողջ ուղիւնոս մը կը խլրտէր, և քանի՛ այդ ատեւութիւնը կը պոռթկար՝ միւսն ալ այնքան խածատիչ հեղնութեան մը սլաքներով կը խոցուէր զայն: Բայց տակաւ ինքն ալ կը բարկանար, որովհետեւ Պէթա սկսած էր անասելի բաներ արտահանել իր յիշոցներու ծրարէն:

Միւս մուրացիկները միշտ սարսափի մէջ էին, և անխօսուկ կը հետեւէին այդ գութաբերին որ ամենի հսկայամարտի մը համեմատուած թիւնները կը ստանար իրենց աչքին: Երկու մուրացիկներու, երկու բողբոջակներու պայքարը չէր տախկա, այլ իրենց հաւատքին, իրենց իղձին, իրենց բովանդակ էութեան տակաւին անստոյգ պայքարը ուրիշ հաւատարի մը, ուրիշ իղձի մը, ուրիշ էութեան մը դէմ: Անոնք այն քա՛ն գրաւուած էին անոր դրուագներով որ չէին իսկ զգար թէ Պէթա

իր կատաղութիւնը իրենց վրայ կը թափէ, միւսէն կըսած անարգանքին հատուցումը իրենց տուայտանքին մէջ կը փնտռէ: Անոնք վճռական բաղիւսումի մը կը սպասէին, այլեւս միայն այդ պահով, միայն այդ պահուն համար կ'ապրէին:

Օր մը՝ մինչդեռ Պէթա կրկին կը հայնոյէր, նորեկը՝ մոլեգնութեան վայրկեանի մը մէջ իր անարկու անիւ տքծանի մը պէս սեղմեց անոր մէկ հատիկ բաղիւին վրայ, վերջուց մարմինը, և սկսաւ ցնցել կատաղութեամբ: Պէթա՝ ցաւի աղաղակ մը արձակեց, բայց գրեթէ անմիջապէս վերջ աչքը իր նախկին բաղիւսիցներուն վրայ խնկաւ, ափսոս, և առանց զգացած ցաւին կարեւորութիւն տալու՝ վերսկսաւ հայնոյլ:

Այն ատեն՝ զարհուրելի չափ մը փայտասկիւն իր հակառակորդին աչուրներուն մէջ: Ան գետինը դրաւ Պէթայի դողահար ու կծկուած մարմինը, յետոյ կրկին ուսերէն բռնելով վերջուց, քանի մը սնդամբ բոտորէն դարձուց անջրպետին մէջ ու ծովը նետեց յաղթական կանչով մը որուն արձագանքը ծովուն ճողիւնին ձուլուեցաւ, և խղճ զոհ հալածեց նաև ջուրերուն ալքերէն ներս:

* * *

Դժուարաւ ազատեցին Պէթան, բայց ան այլեւս այդ կողմերը չմնաց, գլուխը առաւ ու անհետացաւ, որովհետեւ ինք ալ կը զգար թէ երբեք չափաի կրնար առջի Պէթան դառնալ իր բաղիւսիցներուն աչքին: Ինչ հաւատք որ կեդրոնացուած էր իր վրայ՝ ծովը որսած առած էր, հետեւաբար՝ միայն հասարակ ծմբաբարձ մը, անկար ու ողորմուկ արարած մը պիտի մնար իր երբեմնի ընկերներուն աչքին:

Իսկապէս ալ՝ անոնք իրենց հաւատքը նորեկին վրայ կեդրոնացուցած էին: Զեռնածու ճարպիկութեան վերացական պաշտումին յաջորդած էր բիրտ ոյժին՝ կորովաբուլիս ու յաղթապան՝ բաղկի ոյժին աւելի դրական պաշտումը:

Եւ անոնք կրկին երբեմնի ցաւաղէն՝ կեանքը կ'ապրէին նաւամատոյցին բոլորով, կրկին մուրալու ելլելով իրենց հաւաքածը նոյնութեամբ կը բերէին յաղթականին ընծայելու, և կը կորսնացին անոր քմահաճոյքներուն առջեւ՝ ինչպէս արմաւենին փոթորկայոյլ քամիներու հոսանքներուն տակ:

Ճակատագրի նոյն լծուորներն էին անոնք. միայն լուծը փոխուած էր:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

Մատիսի նախորդ թիւով հրատարակած էինք Լէնինի Անտրիէֆի մէկ պատմութեամբը, որ պղտիկ գաղափար մը կուտար հեղինակին վրայ: Ներկայ թիւով կը սկսինք հրատարակութեանը իր ուրիշ մէկ պատմութեան, որ ամէնէն յուզիչ ու հոգեւորանական էջերէն մէկը կը կազմէ իր գործին: Լէնինի Անտրիէֆ նոր գրող մըն է, դեռ երեսասարգ, բայց արդէն փառքի գազաթնակէտին վրայ, սրով-հեռեւ իրմով ուռւա գրականութեան մէջ յայտնուած է մեծ գէմը մը, որ հուժկու գրիչի մը, խոր հոգեբանութեան մը եւ վիպասանական ինքնատիպ կարողութեան մը կը միացնէ եղբայրներէն բարձր տաղանդ մը:

Ա.—

ՆԻՉԷԻՆ ԶՈՅՐ

Նիչէն ուսումնասիրելով, Սէրժ Բեթրովիչ մասնաւորապէս հմայուեցաւ «Գերմարդ»ին գաղափարէն, եւ բոլոր այն բաներէն, զորս փիլիսոփան կը խօսի ուժեղ, անկախ եւ յանդուգն միտքերու վրայ: Սէրժ Բեթրովիչ աղէկ գերմաներէն չէր գիտեր, միայն գալոցին մէջ սորված ըլլալով քիչ մը բան, մեծ դժուարութիւն կը քաշէր գայն թարգմանելու համար: Իրեն կ'օգնէր Նովիքով, համալսարանի ընկեր մը, որուն հետ սենեկակից էր հազիւ ութը ամիսէ ի վեր: Նովիքով աղէկ գերմաներէն գիտէր եւ փիլիսոփայութեան վրայ խիստ առաջացած ծանօթութիւններ ունէր: Բայց, 189... հոկտեմբերին, երբ Այսպէս Խոսեցաւ Զարարուսրաւի թարգմանութիւնը գրեթէ աւարտած էր, Նովիքով հեռացուեցաւ Մոսքուայէն, գայթակղութիւն ներու պատճառով: Իր անձնական կարողութիւններուն մէջ մնալով, Սէրժ Բեթրովիչ շատ դանդաղ կերպով միայն կրցաւ առաջ երթալ, բայց այդ բանը չվրդովեց զինքը. ան կը բաւականանար միայն կարգացած եւ հասկցած էջերովը, որոնց բնագիւղը դոյ գիտէր: Իրեն համար, իմաստասէրին վճիռները կը կորանցնէին իրենց արժէքը թարգմանութեան մէջ, ո՛րչափ ալ գեղեցիկ ըլլային. անոնք իր աչքին չա՛տ պարզ, չա՛տ հասկնալի կը դառնային, մերկացնելով հիմը խորհրդաւոր անդունդին: Բայց գիտելով չրջադիժերը կոթիք դրուածքին, ան իւր քանչիւր նախադասութեան մէջ, պարզ իմաստին քով կը տեսնէր բան մը՝ զոր բառերը չէին թարգմաներ. թափանցիկ խորութիւնը կը քողարկուէր եւ կ'անհունանար: Երբեմն կը մտածէր որ՝ եթէ նոր մարգարէ մը երևար աշխարհի վրայ, ան պէտք էր անսովոր լեզուով մը խօսիլ, ամէնէն հասկցուելու համար:

Ատոր համար չթարգմանեց գիրքին վերջաբանը, Նիչէի միակ գործը՝ զոր Նովիքոֆ իրեն ձգած ըլլար:

Երրորդ կարգի ուսանող, Սէրժ Բեթրովիչ կը հետեւէր բնական դիտութիւններու կաճառին դասընթացներուն: Իր պարագաները, եղբայրները եւ քոյրերը կը բնակէին Սմոլէնսք: Մեծ եղբայրը բժիշկ էր: Շատ յաճախորդ ունէր, բայց չէր կրնար օգնել իր արեւակիցներուն, որովհետեւ ինք ալ ամուսնացած եւ զաւակներու հայր էր: Սէրժ Բեթրովիչ տասներկնդ ուսուցիչի ամսաթոշակ մը ունէր սպրեւու համար, ինչ որ իրեն կը բաւէր, որովհետեւ ուսանողներու ձրի ճաշարանը կ'ուտէր հայրը, չէր ծխեր եւ շատ քիչ կը խմէր: Նովիքոֆի մեկնումէն առաջ, երկու ընկերները յաճախ կը գինովնային, բայց ստիկա Սէրժ Բեթրովիչի քսակին չէր դպեր, որովհետեւ Նովիքոֆն էր որ հաշիւները կը մաքրէր տուած դասերուն փոխարէքը եղող լիառատ վարձատրութիւններով: Գինով եղած ատեն Նովիքոֆ կը սիրէր պողոտաներուն ծառերն ի վեր մառելիլ: Անշամ մը Սէրժ անոր օրինակին հետեւեցաւ. դատաւորը ասոր համար տղաքը տասը ուսուցիչ տուգանքի դատապարտեց: Նովիքոֆ երկուքնուն դրամն ալ տուաւ: Այս դէպքը ո՛չ մէկուն զարմանք պատճառեց, որովհետեւ, տրուած ըլլալով իրենց մտերմական կապը՝ տոնկա շատ բնական բան մըն էր՝ Սէրժ Բեթրովիչի համար: Ասկէ զատ, պէտք էր դրամի չգոյութիւնէն զգուշանալ, ինչպէս տակաւին ուրիշ բաներէ:

Այսպէս, իր կեանքին վրայ խորհելով, Սէրժ Բեթրովիչ կը մտածէր թէ, պէտք էր գլխահակ համակերպիլ անոր: Զէ թէ դժգոհեալի դէմք մը ունէր, բայց տղեղ էր, ինչպէս են հարիւրաւոր եւ հազարաւոր անձեր: Լայն ու տափակ ռեզուներ, թանձր չրթունքներ եւ ցած ճակատ մը՝ զինքը կը դարձնէին նման շատ մը ուրիշ մարդոց, իր դէմքէն չեզոքացնելով ամէն անհատականութիւն: Աչքերը գոց կը հագուէր, եւ շատ քիչ անշամ հայելի կը նայէր. բայց երբ անոր մօտենար՝ երկար կը քննէր աչքերը եւ զանոնք կը նմանցնէր ծեծուած սրուի, որուն մէջ կարելի է դանակ մը մխել առանց ընդդիմութեան հանդիպելու: Այս տեսակետով, ինչպէս շատ մը ուրիշներով, կը տարբերէր իր բարեկամը Նովիքոֆէն, որ խորաթափանց եւ յանդուգն աչքեր, բարձր ճակատ մը եւ ներդաշնակ ձուածեւութեամբ գեղանի դէմք մը ունէր: Եւ Սէրժ Բեթրովիչ՝ աս ամէնուն վրայ նախատինք մը կը նկատէր այն խոշոր իրանը, որ կը կրէր իր գարշելի գլուխը: Թերեւս ասոր համար էր որ կռնակը կը ծռէր ծերուկի մը պէս: Բայց Սէրժի համար, ամէնէն անհանդուրժելին, ուշիմ չնկատուին էր: Վարժարանին մէջ ուսուցիչները զինքը անմիտի տեղ կը դնէին, եւ բացորոշապէս կը յայտնէին իրենց գաղափարը, մանաւանդ վարի դասարաններուն մէջ: Օր մը, երբ ասուշ պատասխան մը տուաւ «Սմոլէնսքի եւ Մօկիլօֆի շոշորդը»

ըսաւ մատրանասերտը անոր, եւ թէպէտ այս անհաճոյ տխուրսը չմնաց իր վրան, եւ ան ընդհանրապէս բոլոր հասո-գիւլս ուսանելիները որակող անուն մը եղաւ, բայց Սէրժ չմոռցաւ անոր ծագումը: Գոտարանին մէջ մինակ ինք մնաց առանց «մականուն»ի, ամէնքը, ուսուցիչներ, ուսանողներ, դռնապաններ՝ իր բուն անունը կուսային իրեն. — «Սէրժ Բեթրովիչ»: Իր վրայ չունէր ան բան մը՝ որ սրամիտ մականուն մը ըլլալու ծառայէր: Համալսարանին մէջ, ուսանողները՝ որոնք կը սիրէին իրենց ընկերներուն կարողութեան աստիճանը սահմանել, միաձայնութեամբ Սէրժը դասեցին միջակ էայնորու շարքին մէջ: Սէրժ կը գուշակէր այդ բանը, առանց որ անոնք իրեն ըսած ըլլային, որովհետեւ ամէնքն ալ անշտորճ հարցումներ միայն կ'ընէին իրեն. միշտ ծաղրական չեչտով մը կը խօսէին իրեն հետ: Բայց երբ Նովիքով վրայ հասնէր, խօսակցութիւնը անմիջապէս լուրջ հարցերու վրայ կը դառնար: Առաջները, Սէրժ Բեթրովիչ բողոքեց իր մասին դոյացած ընդհանուր կարծիքին դէմ. ջանաց սրամիտ բան մը ընել, ըսել կամ գրել. բայց խնդուք միայն կըցաւ առթիւ: Այն ատեն համալսարանը որ՝ ճշմարտացի անտառանդ մըն էր ինք, եւ եթէ ամբողջ աշխարհ ալ իր վրայ խելք գտնել ջանար, սիրտի տաշակութիւնը բռնորին վրայ ալ: Որովհետեւ ո՛չ մէկուն տրուած էր հասկնալ թէ ի՞նչ գիտէր Սէրժ Բեթրովիչ: Կը պատահէր որ խելացի մըտածում մը արտայայտէր, բայց ոչ ոք կրնար հասկնալ թէ ան տեղէ մը դողցած էր այդ խօսքը, թէ իր միտքը լուսաւորուած էր լայն աշխատութենէ մը՝ որ իր դրոշմը տուած ըլլար իրեն: Ի՞նչ բան որ ուրիշները առանց գիտարութեան կ'ըմբռնէին, հաշար ճիշդերով կը հասկնար Սէրժ. թէպէտ իր յիշողութիւնը պայծառ հետքեր ունէր, բայց այդ գիտակցութիւնը արտասուէր, անանձնական կու գար իրեն: Իրաւոյն Սէրժ Բեթրովիչ մոռածումի մը քովը յտակօրէն կը տեսնէր այն էջը՝ ուր զայն կարդացած էր: Եւ երբ այդ էջերը քովը չըլլային, կը կարծէր թէ անոնք իրենն են, այսինքն՝ պարզ, հասարակ, նուազ խելացի. անոնք կը նմանէին հաշարաւոր ուրիշ մոռածումներու, ինչպէս որ իր գէմքը կը նմանէր հաշարաւոր ուրիշներու գիմազծութեանը: Ո՛րչափ ալ գիտար ըլլար իրեն հրժարել այդ բանը հաստատելէ, Սէրժ Բեթրովիչ կըցաւ սակայն տիրանալ անոր: Գալով իր տաղանդի չգոյութեան, վատաւողչութեան, ճակատելութեան, խեղճութեան, ասոնք բաղդատարար քիչ կարեւորութիւն ունէին:

Խօսելու համար. առանձնաբար այդ ճիւղերուն վրայ, պէտք է ըսել թէ անոնք կ'իրականացնեն իրենց ծրագիրը լուսաւորող յաջողութիւնով, եւ երբէ **Հանրագիտակ** շահեկան աշխատութիւն մըն է՝ իբր երգիծական գրականութեան նմուշներու եւ ներկայացուցիչներու ամփոփում մը, պատկերազարդուած այդ գրականութիւնը ծաղկեցնող գրագէտներուն լուսանկարներով, **Ծաղիկ** այսպէս ուշադրաւ գործ մըն է, իբր գրական հասուածներու փունջ մը, Դիսէյի է սակայն որ՝ այս ինքուր գրական - ձեռնարկներու մէջ սովորական դրամած սխալ մը համարմաս՝ **Ծաղիկի** փունջը կը խառնարուի անսեղի ծանրաբեռնումովը մէկ քանի ղէմքերու, որոնք փունջին մէջ արատնակ ծաղիկներու զիրքը ունին։ Տիկին Տէր-Քարոնող մը կրնայ յօդուածագիր մը ըլլայ, բայց ի՞նչ երբեք մը լուսանկարով փռուելու արժանի ղէմք իր կանգուն մը մէջ՝ ուր կը բազմին Միմրեանի, Նիշէ, Նախիպագոյի պէս ղէմքեր։ Անունը ու համբաւը մոռցուէին ճերեւս՝ երբ գտնէ տպարանը ու գրուած քին արժանատութիւնը չպակսէին։ **Ծաղիկին** մէջ չէ փոխած նաեւ սպրդէլ իրենց չունեցած արժանիքովը յոխոս գրականութեան այն քրքրահաւան ղէմքերէն մէկը, — քիչ մը շացցած մօր մէջ, հիմա — որ գրական անցեալ անտնուկ վաստակի մը ինքնատիւ-չակ համբաւով միայն սիգալուած, եւ ներկայ ժաւարական ողբալի անանկութեան մը առջեւ շուարուն, գրական հրեւմտմանի գանձարանի մը փռչններուն տակէն հասակոյտոր քրամոներ միայն կրցած է մէջտեղ հանել, «կախման կէտերու արժանի գրականութեան մը իբր նմուշ, որուն ունայնամոլի փառքովը կ'օրօրէ ինքզինքը անոր հեղինակը, **Հանրագիտակի** վերլուծումին փառնալով, նշմարելի է որ Վահան զառիգեանի Զաւերջանութեանն այդ բացառիկ թիւին

Մինչ պարբերականներէ ոմանք գրական ոգեւոր թեւարարութներ կը փորձեն, ուրիշ մը՝ **Լեւոն** կ'օճաթենքը՝ կը դարբին նոսրիկն վարչութեամբ եւ խմբագրութեամբ իր հրատարակութենէն, անցնելով **Մանգուլի** Տնօրէն Յովն. Ֆ. Էփ. Գոյեւհանի ճշմարտապէս լուրջ ու գնահատելի լրագրական գործունէութենէ մը ետքը, որ զբաղումը եղաւ այս հրատարակութեան, եւ որուն Բազէն վարչապետ նուիրեց իր ամէնէն ազնիւնաւոր ջանքերը, մնայուն ու բազմաշխատ գործ մը մէջեղ հանելով, **Լեւոն** զաղարու մը նիւթական անբաւականութեան հետեւանքով, որչափ խոր՝ նոյնչափ թեւարարիչ է։ Այս վախճանին մէջ կը պատկերանայ մէկ գրուազը ընթերցող հատարակութեան հանդէպ լրագրական ձեռնարկներու վերաբերումին, երբ կ'օճաթենքը մը չի կար դեռ, ամէն կողմէ բազմանք կը՝ յայճնուէր այդ տեսակ ձեռնարկի մը հիմնումին, եւ ամսիս չէր անցներ որ լրագրական սիւնակէ մը չարձագանդէր աղաղակ մը այդ քաղձանքը վերիշեցնող։ Ի՞նչ եղաւ աղիւնքը երբ հիմնուեցաւ կ'օճաթենքը, Լեւոնքը աղաղակութեան քաջալերութեան պակասին առջեւ՝ տոյգ ա՛նչափ՝ որչափին կ'ընար զօրել նիւթական շա՛ն իսկ ամուր կուռանքի մը պայմանաժամուած յարատեւութիւնը։ Ա՞ս պիտի ըլլար քաջալերութեան եղանակը կ'օճաթենքի գաղափարով վրդոված ժողովուրդին։ Ու մտածել որ չեն պակսիր ասեն ասեն տոյգ յատուկ կամ մանկավարժական երեքի պէտքը զգացնողներ, որոնք կը ջարդեն ու կը ջարդեն... ձեռի խօսքեր։ Երբ սակայն՝ կ'արգը զայ վնարելու, Կոնքի սէրին ա՛նչափ հաշ համայնք մը եւս կ'օճաթենքը մը չկ'ընար պարեցնել, մանկավարժականը եւ տոյգ երեքն է՝ մնացեր . . .

ՊԱՐԳԵԻԱԻՈՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիսի բաժանորդագրութեան մէջ, ընթերցողները օժտելու համար գրական հրատարակութիւններով, հաստատած ենք նուէրներու գրութիւն մը, որ հաճելի ու շահաւէտ առիթ մը կրնայ ըլլալ ամէն ընթերցողի համար: Դեկտ. 1 էն մինչեւ երկու ամիս Մասիսի բաժանորդագրուիլ փութացող ո՛ր եւ է ընթերցող՝ իրաւունք պիտի ունենայ ստանալու երկու գրական հատորներ՝ օրումն ամէնէն այժմեական հրատարակութիւններէն, իրենց ընտրանքին համեմատ:

Այդ հատորներն են

ՅՈՒՐԵՐ.	— ՍԻՊԻԼ	Դիմ 5 դր.
ՆԵՐՈՒՆԵՐ.	— ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	» 5 »
ԿԵՆԸ.	— ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ	» 5 »
ՆԵՐՍԵՆԱՐԷ.	— ԻՆՏՐԱ	» 12 »
ԱՆՐՋԱՆԵՐ.	— Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ	» 5 »
ԼԵՈՒԱՆԾ ԲՆԱՐ.	— ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	» 5 »

Մինչեւ երկու ամիս կը տեւէ պայմանաժամը այս պարգևատր բաժանորդագրութեան օգտուելու առիթին, որմէ ետքը բաժանորդագրողները չպիտի կրնան նպաստաւորուիլ անիւ: Իսկ անոնք որ փութան մինչեւ այդ պայմանաժամին լրումը բաժանորդագրուիլ Մասիսի, առանց որ եւ է բացառիկ յիշարման, վերելի հրատարակութիւններէն իրենց ընտրանքին համեմատ իրաւունք պիտի ունենան ստանալու 10 դրշտոյ գիրք, զոր թղթատարի ծախքը (3 դրշ.) մեր վրայ՝ պիտի փութացնենք իրենց հասցէին՝ իրենց բաժանորդագրիչին տուած յաջորդ. թղթատարով: Յայտնապէս զգալի է թէ, անուղղա՛յի կերպով 13 դրշ. ի գէղջ մը է Մասիսի բաժանորդագրութեան վրայ նուէրի այս գրութիւնը, զոր հաստատած ենք՝ հիմնապէս դիւրամապելի և աժան ընծայելու համար Մասիսի բաժանորդագրութիւնը, և ընթերցողները օժտած՝ վերջին ամէնէն փնտռուած գրական հրատարակութիւններով:

5 ՕՍՄ. ՈՍԿԻԻ ՊԱՐԳԵԻ ՄԸ

Մինչեւ Յունիարի վերջը Մասիսի որ եւ է մէկ էջին մէջ, գրուածքի մը մէկ անիւնը պիտի գետնադուր քանի մը տողով ծանուցում մը, որ պիտի ծառայէ ընթերցողին ցուցնելու թէ, ինչպէս կարելի է չափել 5 Օսմ. օսկիի պարգևը: Այդ երկուողը գրուածքին մէջէն ճիշդ գտնող և առաջին անգամ հասցէին ներկայացնողը՝ պիտի ստանայ 5 Օսմ. օսկի: Երկրորդին մէջ ընթերցողը լրովին պիտի տեղեկանայ 5 օսկին ի՛նչպէս և ո՛ւրի՛շ գտնուելուն: Ամէն ընթերցող կրնայ շատ դիւրաւ գտնել այդ տողերը գրուածքներուն մէջէն: Կը բաւէ միայն ուշադիր կարդալ բոլոր գրուածքները:

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Պոլիսի և դաւառանքու համար տարեկան

60 դր. 7

Արտասահմանի

» »

14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւներէն ձրիաբար երկու դրք, իրենց ընտրանքին համեմատ, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բաշարձակալէս կանխիկ է :

Զննատարկութեամբ ձեռագիրները կա չեն դարձուիր :

Նամակ կամ որ եւ է գրութիւն ուղղել խմբագրութեան հասցէին. —

در علی باب عالی ساره سره سرر ۵۲ « ماسیس » غزیه اراره ما

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ « ՄԱՍԻՍ » Ի

Պապր-Ալի ճուսսէսի, ք/ն 52. Կ. ՊՈԼԻՍ

Rédaction de la Revue „MASSIS“

Avenue de la Seizieme Porte, No. 52.

CONSTANTINOPLE

3-Յ ՕՍՄ. ՈՍԿԻԻ ՄՐՅԱՆԱԿ ՄԸ

Հաստատած ենք դաւառական գործախախտութիւնը, զոր կրնայ չանիլ ո՛ր եւ է փութաջան գործախալ : Այն անձը կամ գործախալը, որ մինչեւ փետրուարի վերջը ամէնէն բարձր թիւով բաժանորդը կը գտնէ, և ամբողջովին կը հասցնէ մեզ բաժանորդագիրն, կը ստանայ 3 Օսմ. ոսկի : 30է վար թիւ մը չընդունուիր այս մրցումին համար : Այս բաժանորդներէն ամէնքն ալ իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները ձրիաբար (սեւ պարգեւաւոր բաժանորդագրութիւն) : Ո՛ր եւ է դաւառական անձ կրնայ չանիլ այս պարգեւը : Պէտք չկայ սղաակելու 30 բաժանորդին լրանալուն՝ որդէսլի գործախալ մը գտնուի ամբողջովին զրէ կը խմբագրութեան : Կրնայ պարտաւորաբար զրէլ իր բաժանորդները, յիշելով միշտ իր անունը, և երբ մեր տնօրէնին մէջ լրանայ 30 թիւը՝ անմիջապէս կը ստանայ 3 Օսմ. ոսկին : Մրցանակը շահողին անունը՝ բնակութեան տեղովը՝ պոլսի ծանուցութի Մասիսի մէջ : Մէկէ աւելի 30 թիւը անցնողներ՝ ամէնքն ալ պոլսի ստանան նոյն պարգեւը : Մրցանակին գումարը կը բարձրանայ 4 ոսկիին՝ երբ գործախալ մը կ'ընդգրկէ 40 թիւը, և 5 ոսկիին՝ երբ 50 ըլլայ թիւը : Եւ չափունա խմբար : Ստանանք ընդարձակ է : Օ՛ն, Ժուլիան, դէսլի ամէնէն բարձր թիւը :